«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան - 2024

ՆԱԽԱԲԱՆ

Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ ՎՁՏՊՔ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ. 6
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 13
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 13
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 13
ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 16
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 16
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ Ու ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 19
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 26
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 34
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 38
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 43
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 46
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 51
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 54
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 58
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 64
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 65
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 65
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 67
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 69
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 72
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 73
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 74

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Այս բաժնի նպատակն է ծանոթացնել ընթերցողին ՄՈՒՀ-ի գործունեության համատեքստին՝ տրամադրելով տեղեկատվություն գործունեության միջավայրի, կրթական ծրագրերի և գնահատման գործընթացը պայմանավորող այլ առանցքային ուղղությունների մասին: Չափանիշներում ներկայացվող փաստերն ու դատողությունները կառուցվել են՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գործունեության արտաքին համատեքստը և ներքին միջավայրը:

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը.

Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջը հիմնադրվել է 1971թ.-ից Եղեգնաձորում գործող Երևանի էլեկտրամեխանիկական տեխնիկումի Եղեգնաձորի մասնաճյուղի հիման վրա, որը 1993թ.-ից դարձել է Երևանի ֆինանսատնտեսագիտական քոլեջի Եղեգնաձորի մասնաճյուղ, և որի հիման վրա 2001թ. այն առանձնացել է որպես առանձին ուսումնական հաստատություն՝ կոչվելով Եղեգնաձորի պետական քոլեջ, այնուհետեւ 2011թ. վերանվանվել է որպես Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ[1]:

Քոլեջը 2021 թվականին անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց, որի արդյունքում ուսումնական հաստատությանը շնորհվել է պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի ժամկետով[2]:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջը Վայոց Ձորի մարզում գործող միակ մասնագիտական ուսումնական հաստատությունն է:

Եղեգնաձոր քաղաքի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռող ոլորտներն են արդյունաբերությունն ու շինարարությունը: Զարգացած են խաղողի գինու, էլեկտրասարքավորանքի արտադրությունները, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունները[3]:Քոլեջն իրականացնում է 5 մասնագիտություններով միջին մասնագիտական կրթական ծրագրեր՝ «Զբոսաշրջություն», «Հաշվապահական հաշվառում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Իրավագիտություն», «Ֆինանսներ»: 4 մասնագիտություններով հաստատությունն իրականացնում է նախնական մասնագիտական կրթական ծրագրեր՝ «Խոհարարական գործ», «Փայտագործություն», «Գինեգործություն և հյութերի արտադրություն», «Կարի արտադրության տեխնոլոգիա»[4]:

---

[1] ՎՁՏՊՔ ինքնավերլուծություն, 2024 թ.
[2] Հավատարմագրման պետական գրանցամատյան
[3] Հայաստանի վիճակագրական կոմիտե, 2022 թ.
[4] ՎՁՏՊՔ ինքնավերլուծություն, 2024 թ.

Քոլեջն ունի լիցենզիայի 30-ական տեղ «Փայտագործություն» ու «Գինեգործություն և հյութերի արտադրություն» կրթական ծրագրերի իրականացման համար: Մյուս կրթական ծրագրերի համար քոլեջին հատկացված են 20-ական լիցենզիոն տեղեր:

Քոլեջի ուսանողների թվաքանակի վրա ազդում է նաև մարզի բնակչության սակավաթիվ լինելը: Վայոց ձորի մարզը ՀՀ ամենանոսր բնակչություն ունեցող մարզն է: Այն առանձնանում է նաև գյուղական նոսր բնակչությամբ: Մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքը 2023թ. տարեսկզբի տվյալներով ունի ընդամենը 7000 բնակիչ[5]: Ներկայումս քոլեջում հիմական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 349 ուսանող՝ առկա և հեռակա կրթաձևերում:

Փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին դասախոսների միջին թիվը 30 է, դասախոսական կազմը և թվաքանակը հիմականում անփոփոխ են: 2023-2024 ուսումական տարում Քոլեջում դասավանդող 30 մասնագետներից 4-ը՝ համատեղությամբ են աշխատում:

Շրջանավարտների զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն դիրքերում են գտնվում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Զբոսաշրջություն», «Գինեգործություն» և «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագերի շրջանավարտները: Ըստ 2022-2023թթ. տվյալների՝ շրջանավարտների մեծ մասը՝ 31.4%-ը, ուսումը շարունակել է, 10%-ը նախքան ավարտելը աշխատանք է ստացել, 8.5%-ը աշխատում է իր մասնագիտությամբ, իսկ 21.4%-ը՝ ոչ մասնագիտությամբ, գործազուրկ շրջանավարտների թիվը կազմում է 8.5%, իսկ ավարտելուց անմիջապես հետո աշխատանք ստացած ուսանողների թիվը՝ 12.8%[6]:

[5] Հայաստանի վիճակագրական կոմիտե, 2022 թ.
[6] ՎՁՏՊՔ ինքնավերլուծություն, 2024 թ.

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

«Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

ՀՀ որակավորումների ազգային շրջանակի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան՝ Քոլեջն իրականացնում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր: Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջը միջին մասնագիտական կրթություն իրականացնող միակ հաստատությունն է մարզում, որի գործունեությունը միտված է տարածաշրջանում կրթական և սոցիալ-մշակութային խնդիրների բավարարմանը, տարածաշրջանային և ազգային արժեքների պահմանմանը, տնտեսության զարգացմանը:

Փորձագիտական խումբը հաշվի է առել նաև, որ Քոլեջը 2021 թվականին անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց, որի արդյունքում ուսումնական հաստատությանը շնորհվել է պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի ժամկետով: Փորձագիտական զեկույցում նշված թերությունների և խորհրդատվությունների հիման վրա 2022 թվականին հաստատվել է թերությունների վերացման գործողությունների ծրագիր:

Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի կառավարման և որակի ապահովման համակարգերի վերլուծությունը ցույց է տալիս, որ քոլեջը քայլեր է ձեռնարկել իր ռազմավարական նպատակների իրականացման ուղղությամբ: Քոլեջի ռազմավարական ծրագիրը նպատակ ունի բարելավել կրթական ծրագրերը և օպտիմալացնել կառավարման գործընթացները՝ հիմնվելով տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջների վրա: Ավելի հստակ գնահատման ցուցիչների և պատասխանատուների շրջանակի սահմանումը կօգնի գնահատել առաջընթացը և կատարված գործողությունները: Գործողությունների հստակեցումը և պլանավորման ժամանակացույցի ճշգրտումը հնարավորություն կտան նաև արդյունավետ կերպով իրականացնել կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր՝ ապահովելով կառավարման առավել արդյունավետ իրականացում:

Քոլեջում դեռևս շարունակում է խնդիր մնալ տվյալների հավաքագրման մեխանիզմների անկատարությունը: Տվյալահենք որոշումների կայացման ակտիվացումը կնպաստի ավելի լավ պլանավորմանը և կառավարմանը: Շահակիցների, ուսանողների և գործատուների կարիքների վերհանումը թույլ կտա ավելի հիմնավորված որոշումներ կայացնել կրթական ծրագրերի և կառավարման գործընթացների վերաբերյալ: Ներկայումս

առկա հարցումներն ու հետազոտությունները կարող են բարելավվել՝ դառնալով ավելի համակարգված և օգտագործվել ռազմավարական նպատակների իրականացմանն աջակցելու համար։

Դրական հանգամանք է, որ քոլեջը, ֆինանսական ոչ մեծ հոսքեր ունենալով, կարողանում է ապահովել իր կթական ծրագրերի կատարումը, ճկուն որոշումներ կայացնել ունեցած ռեսուրսներով նպատակների իրականացման համար՝ կիրառելով նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսներն ու ենթակառուցվածքները։

Որակի ներքին ապահովման համակարգի ամրապնդումը նույնպես կարևոր է տվյալների վրա հիմված կառավարման մշակույթի զարգացման համար։ Կարիքների վերհանման համար իրականացվող հարցումների վրա հիմված վերլուծությունները կկարողանան ապահովել որակի ներքին ապահովման ավելի ամուր հիմք, ինչը կնպաստի շարունակական բարելավմանը։ Այսպիսով, դիտարկելով քոլեջի ռազմավարական կառավարման ու որակի ապահովման գործընթացները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ տվյալների վրա հիմված վերլուծական մեխանիզմների ներդրումը կօգնի արդյունավետորեն կապել ռազմավարական պլանավորումը և որակի ապահովումը, ինչը կնպաստի քոլեջի կայուն զարգացմանը և որակի մշակույթի ձևավորմանը։

Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի կրթական ծրագրերը կազմված են պետական կրթական չափորոշիչների հիման վրա, մոդուլային ծրագրերի համար սահմանված են արդյունքները, նպատակները, բովանդակությունը, կատարման չափանիշները։ Կիրառելով դասավանդման և ուսումնառության համապատասխան մեթոդներ՝ քոլեջը կարողանում է թողարկել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող շրջանավարտներ, որոնց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները գործատուների համար հիմնականում ընդունելի են։ Հաշվի առնելով աշխատաշուկայի մշտադիտարկման խորը վերլուծությունը՝ կարելի է ավելի հիմնավորված որոշել, թե որ նոր կրթական ծրագրերն են անհրաժեշտ, ինչպես նաև արդիականացնել առկա ծրագրերը՝ ուղղված տարածաշրջանի զարգացման կարիքներին։

Դուալ կրթական ծրագրերի խթանումը կարող է ապահովել կրթության տեսական և գործնական բաղադրիչների սերտ կապը։ Այս մոտեցումը հատկապես կարևոր է գործատուների հետ համագործակցության խորացման համար, քանի որ գործատու դասավանդողների նպաստում է ուսանողների պրակտիկ հմտությունների ձևավորմանը՝ համապատասխան ոլորտի պահանջներին։ Դուալ կրթական ծրագրերի ընդլայնումը դեպի նոր մասնագիտություններ կնպաստի ուսանողների հմտությունների ձևավորմանը՝ դարձնելով նրանց ավելի մրցունակ աշխատաշուկայում։

Նախորդ հավատարմագրումից հետո ՄԿԾ-ների բարելավման հաջորդ կարևոր քայլը ընտրովի և նախասիրական առարկաների մշակման գործընթացում ուսանողների և գործատուների ակտիվ ներգրավումն է։ Այս մոտեցումը կապահովի, որ ծրագրերը ոչ միայն համապատասխանեն շուկայական պահանջներին, այլև բավարարեն ուսանողների ակնկալիքները և կարիքները։ Ավելին, գործնական հմտությունների գնահատման մեխանիզմների բարելավումը կօգնի օբյեկտիվորեն գնահատել ուսանողների առաջընթացը՝

բազմագործոն գնահատման համակարգի միջոցով, ինչը ավելի մեծ ճկունություն և հիմնավորվածություն կտա որակավորումների արժանահավատ շնորհման գործընթացում:

Կրթական ծրագրերի համեմատական վերլուծությունը համանման ծրագրերի հետ ևս կարևոր է քոլեջում լավագույն փորձի տեղայնացման համար:

Քոլեջում դասավանդում են համապատասխան որակավորում և մանկավարժական փորձառություն ունեցող դասախոսներ, ուսումնական վարպետներ, ինչպես նաև երիտասարդ դասավանդողներ, ովքեր հանդիսանում են ոլորտի գործող մասնագետներ: Փորձագիտական խումբը նշում է, որ ելնելով դիտարկված կրթական ծրագրերի առանձնահատկություններից և մարզի զարգացման հեռանկարի տեսլականից՝ գնահատելի է գործատու-դասավանդողների հատուկ հետաքրքրվածությունը՝ իրենց մասնագիտական հմտություններն ու փորձը Քոլեջի ուսանողներին փոխանցելու հարցում: Դասախոսական կազմի պարբերական գնահատման մեխանիզմների ներդրումը հնարավորություն կտա օբյեկտիվորեն գնահատել դասախոսների կարիքները և կարողությունների մակարդակը: Դասախոսների գնահատման արդյունքների հիման վրա մասնագիտական զարգացման միջոցառումների պլանավորումը կնպաստի դասախոսական կազմի կարողությունների զարգացմանը և դասավանդման արդյունավետության բարձրացմանը: Փորձագիտական խումբը դասախոսների մոտիվացիայի բարձրացման համատեքստում կարևորում է նաև մասնագիտական վերապատրաստման, հետազոտությունների աջակցության և նորարարական նախաձեռնությունների խրախուսման ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը:

Կրթական ծրագրերն իրականացնելու համար Քոլեջն ունի բավարար ենթակառուցվածքներ, համապատասխան նյութատեխնիկական բազա և ռեսուրսներ, որոնք ունեն բարելավման և զարգացման շարունակական անհրաժեշտություն: Փորձագիտական խումբը կարևորում է, որ Քոլեջը հնարավորինս հավասարաչափ է բաշխում առկա ռեսուրսները բոլոր կրթական ծրագրերին՝ ապահովելով զարգացման հավասար պայմաններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ պրակտիկաների շրջանակում ուսանողները հնարավորություն են ունենում լիարժեք օգտվել գործընկեր կազմակերպությունների ռեսուրսներից՝ հետագայում աշխատանքի անցնելով նույն կազմակերպություններում:

Փորձագիտական խումբը հաշվի է առել, որ նախնական և միջին մասնագիտական կրթության մակարդակում հետազոտությունների իրականացումը կարող է անմիջականորեն առնչվել մասնագիտական գործնական ոլորտի զարգացման և գործունեության իրականացման հետ: Այս համատեքստում կարևոր է, որ քոլեջը հստակեցնի իր կողմից իրականացվող կրթական ծրագրերի հետազոտական հնարավոր ուղղությունները, պլանավորի դրանց իրականացման համար անհրաժեշտ քայլերը: Նախորդ հավատարմագրման գործընթացից հետո հետազոտության ոլորտում էական փոփոխություններ չեն իրականացվել: Քոլեջն անհրաժեշտություն ունի հետազոտության բաղադրիչը կարևորել ոչ միայն ուսամնառողների համար ուսումնական գործընթացում, այլև, իր ռազմավարական նպատակին համապատասխան, ստեղծել նպաստավոր պայմաններ

դասախոսական կազմի ներկայացուցիչներին հետազոտական նախագծերում ընդգրկելու նպատակով:

Քոլեջն ունի համագործակցության շրջանակ պետական հաստատությունների և մասնավոր ոլորտի կազմակերպությունների հետ, ինչի շնորհիվ կարողանում է ապահովել ուսանողների պրակտիկաների արդյունավետ կազմակերպումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ միջին մասնագիտական այլ ուսումնական հաստատությունների հետ սերտ համագործակցությունը հնարավորություն կտա համեմատել և լավարկել կրթական ծրագրերի բովանդակությունը, ինչպես նաև կնպաստի դասախոսական կազմի փորձի փոխանակմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը, փորձելով դիտարկել տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները, ինչպես նաև վտանգներն ու ռիսկերը, ընդհանուր առմամբ ձեռնարկում է քայլեր զարգացման ուղղությամբ՝ կարևորելով ուսանողների թվի աճը, պոտենցիալ դիմորդների հետ իրականացվող աշխատանքները, կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումը, այդ թվում՝ արտաքին կապերի ընդլայնումը, միջազգային համագործակցության անհրաժեշտությունը, հաշվետվողականությունն ու պատասխանատվությունը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) կառավարման համակարգի ճկունությունը, որը հնարավորություն է տալիս քոլեջի զարգացմանը նպաստող որոշումներ կայացնել անընդհատ փոփոխվող իրավիճակի և պայմանների դեպքում,

2) տարածաշրջանում քոլեջի նկատմամբ վստահությունը հանրային և մասնավոր հատվածի կողմից,

3) տարածաշրջանի համար անհրաժեշտ մասնագիտությունների պահանջի հիման վրա արհեստագործական կրթական ծրագրերի իրականացումը և մարզի պահանջարկի բավարարումը,

4) գործատուների հետ համագործակցությունը պրակտիկաների իրականացման, գործատու դասավանդողների ներգրավման ուղղությամբ,

5) կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի և ռեսուրսների առկայությունը,

6) հասարակությանը արժեքներ փոխանցող նախագծերի իրականացումը քոլեջի կողմից և դրանցում տարածաշրջանի երիտասարդներին ներգրավումը,

7) արտաքին կապերը և համագործակցությունը բիզնես ոլորտի տեղական ներկայացուցիչների հետ:

Հաստատության թույլ կողմերն են.

1) որակի մշակույթի ձևավորման և տարածման գործընթացների վերաբերյալ ոչ միարժեք ընկալումը քոլեջի շահակիցների շրջանում,

2) որակի ապահովման համակարգի կողմից կիրառվող մեխանիզմների ու գործիքակազմի անկատարությունը,

3) ռազմավարական զարգացման ծրագրի արդյունավետության գնահատման ցուցիչների ոչ չափելի սահմանումը և անհստակությունը,

4) քոլեջում ընթացող գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմների թերի լինելը և բացահայտված կարիքների հիման վրա հաջորդ պլանավորման անկատարությունը,

5) նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրերում հետազոտության վերաբերյալ ոչ լիարժեք պատկերացումը և հետազոտական բաղադրիչի թույլ արտահայտումը կրթական ծրագրերում,

6) ոլորտային մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ համագործակցության և փորձի փոխանակման, կրթական ծրագրերի համեմատական վերլուծության բացակայությունը,

7) քոլեջի դասախոսական և վարչական կազմի մասնագիտական վերապատրաստումների պակասը և դրանց համար նախատեսված ֆինանսական միջոցների բացակայությունը:

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1) Բարելավել ռազմավարական պլանավորման գործընթացները՝ հստակեցնելով պատասխանատուների շրջանակը, իրականացման ժամկետները և նպատակների գնահատման ցուցիչները:
2) Շարունակել կառավարման համակարգի բարելավման գործողությունները՝ գնահատելով փոփոխությունների արդյունավետությունը:
3) Քայլեր ձեռնարկել գործատուների հետ համատեղ ծրագրերի իրականացման ուղղությամբ, որոնք կնպաստեն լրացուցիչ ֆինանսական աղբյուրների ներգրավմանը և հնարավորություն կտան իրականացնել երկարաժամկետ ֆինանսական պլանավորում:
4) Վերանայել որակի ապահովման նպատակները՝ հստակ պլանավորելով համակարգի աշխատանքը և կարիքների վերհանման ուղղությունները:
5) Վերլուծել ներքին շահակիցների և աշխատաշուկայի ներկայացուցիչների հարցումների արդյունքները՝ քարտեզագրելով քոլեջի կարիքները:
6) Վերանայել կարիքների գնահատման համար կիրառվող գործիքների մեթոդաբանությունը դրանց արդյունավետության բարձրացման և օգտագործվող ռեսուրսների օպտիմալացման նպատակով:

7) Բարելավել տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմները՝ սահմանելով դրանք ըստ գնահատման ենթակա ուղղությունների նպատակների, ինչը կապահովի հավաստի տվյալներ որոշումների կայացման համար։
8) Քայլեր ձեռնարկել որակի ապահովման պատասխանատուների վերապատրաստման և մասնագիտական զարգացման ուղղությամբ։

Որակավորումների արժանահավատ շնորհում

9) ՄԿԾ-ների պահանջարկի և տարածաշրջանի կարիքներին համապատասխանության ամրապնդման նպատակով կատարել աշխատաշուկայի մշտադիտարկման խորը վերլուծություններ՝ հիմավորելու նոր կրթական ծրագրերի անհրաժեշտությունը։
10) Խթանել դուալ կրթական ծրագրերի զարգացումը՝ ընդլայնելով դրանք այլ մասնագիտությունների և հիմվելով ուսանողների ու գործատուների արձագանքների վրա։
11) Ընտրովի և նախասիրական առարկաների ընտրության գործընթացում ավելի ակտիվ ներգրավել գործատուներին և ուսանողներին՝ շուկայական պահանջներին և ուսանողների կարիքներին համապատասխանությունն ապահովելու համար։
12) Բարելավել գործնական հմտությունների գնահատման մեխանիզմները՝ ուսանողների առաջընթացի ավելի օբյեկտիվ գնահատման համար՝ բազամագործոն գնահատման համակարգի լիարժեք կիրառման միջոցով։
13) Իրականացնել ՄԿԾ-ների համեմատական վերլուծություն համանման կրթական ծրագրերի հետ՝ լավագույն փորձի վերհանման և տեղայնացման նպատակով։
14) Շարունակել ներգրավել գործատու-դասավանդողներ՝ ուսումնական գործընթացի գործնական բաղադրիչն ապահովելու և ուսանողների պրակտիկ կարողությունները զարգացնելու համար։
15) Ներդնել դասախոսական կազմի պարբերական գնահատման մեխանիզմներ և դրանց արդյունքների հիման վրա պլանավորել դասախոսական կազմի մասնագիտական զարգացման միջոցառումներ։
16) Դասախոսական կազմի սահուն սերնդափոխության համար շարունակաբար խրախուսել քոլեջի շրջանավարտների և այլ երիտասարդ կադրերի ներգրավումը դասախոսական կազմում։
17) Լավարկել դասախոսների խրախուսման մեխանիզմները՝ ներառելով մասնագիտական առաջընթացի հնարավորություններ։
18) Իրականացնել այլընտրանքային ֆինանսական ռեսուրսների ներգրավման ռազմավարություն՝ ներառելով համագործակցություններ պետական, մասնավոր և միջազգային կառույցների հետ։
19) Բարելավել քոլեջի գրադարանային ֆոնդը՝ հասանելիություն ապահովելով էլեկտրոնային գրադարաններին և առցանց այլ աղբյուրներին։

20) Իրականացվող կրթական ծրագրերի շրջանակում ապահովել ուսանողների՝ անվտանգության կանոնների իմացության բարձր մակարդակ:

Երկարաժամկետ զարգացում

21) Շարունակաբար տվյալներ հավաքագրել շրջանավարտների մասնագիտական հետագծի վերաբերյալ՝ դրանք օգտագործելով ինչպես նոր դիմորդների շրջանում հետաքրքրության ավելացման, այնպես էլ դնել կրթական ծրագրերի բարելավման հիմքում:
22) Վերանայել հաշվետվությունների ձևաչափերը՝ ընդգծելով արդյունքների գնահատումը, վերհանված քանակական և որակական տվյալների վերլուծումը և առաջընթացի չափումը:
23) Հստակեցնել հանրային իրազեկման ու լուսաբանման պատասխանատվությունների շրջանակը, ուսանողներից զատ ներգրավելով նաև քոլեջի աշխատակիցներին, տեղեկատվության տարածման գործընթացների անընդհատությունն ապահովելու համար:
24) Շարունակաբար ընդլայնել հասարակությանը գիտելիքների փոխանցման միջոցառումների շրջանակը՝ հիմք ընդունելով համայնքի կարիքները:
25) Բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողներին տրամադրել վերլուծական-ստեղծագործական առաջադրանքներ՝ հաշվի առնելով ծրագրերի առանձնահատկությունները:
26) Ներդնել հետազոտական գործընթացներում դասախոսական կազմի ներգրավման ու խրախուսման մեխանիզմներ:
27) Ռեսուրսներ տրամադրել ներքին շահակիցների՝ օտար լեզուների իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ հնարավորություններ ստեղծելու ուսանողների ու դասախոսների շարժունության համար և ապահովելու քոլեջի երկարաժամկետ զարգացումը:



Արմեն Հարությունյան
Փորձագիտական խմբի ղեկավար

18-ը հոկտեմբերի, 2024 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[7] կողմից.

Արմեն Հարությունյան ՝արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Զարգացման գծով պրոռեկտոր, փորձագիտական խմբի ղեկավար:

Յասաման Ավագյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, փորձագիտական խմբի անդամ:

Սուդարիկ Պետրոսյան՝ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի Արհեստագործական ամբիոնի վարիչ, փորձագիտական խմբի անդամ:

Անգելինա Տոնոյան՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում» բաժնի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման բաժնի մասնագետ **Մերի Բարսեղյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 2024թ. փետրվարի 2-ին ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

[7] Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ-ը փետրվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել։ Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող և վերահավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն։

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ։

Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 2024թ. մայիսի 7-ին։ Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից։

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի[8], ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը։ Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[9]։

Նախնական այց

2024թ. հունիսի 12-ին առցանց հանդիպում է տեղի ունեցել Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի ղեկավար կազմի հետ։ Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը։ Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ։

[8] Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ
[9] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2024թ. հունիսի 17-19-ը ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, ավարտական աշխատանքների պաշտպանության և պրակտիկաների, ռեսուրսերի դիտարկում[10] և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը խմբի անդամների հաստատումից հետո տրամադրվել է քոլեջին:

Փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ իր դիտարկումները քոլեջը ներկայացրել է 2024թ. հոկտեմբերի 7-ին: 2024 թ. հոկտեմբերի 17-ին ՈԱԱԿ-ում տեղի է ունեցել հանդիպում քոլեջի ներկայացուցիչների և փորձագիտական խմբի անդամների միջև: Դիտարկումների քննարկումից հետո փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը հաստատվել է խմբի բոլոր անդամների կողմից:

Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

18-ը հոկտեմբերի, 2024 թ.

[10] Հավելված 4. Փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված ռեսուրսներ

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

«Վայոց Ձորի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2021-2026թթ. Զարգացման ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ ՌԾ) հաստատվել է Քոլեջի կառավարման խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 17-ի նիստում: Զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված են քոլեջի գերակայությունները, ինչպես նաև Քոլեջի ռազմավարական նպատակներն ու խնդիրները: Որպես հիմնական նպատակ՝ նշված է. «Տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, բարձրորակ կրթությամբ, գիտելիքներով ու կարողություններով օժտված, մրցունակ մասնագետների պատրաստում և կրթական համակարգի համաչափ զարգացումն ապահովելու համար տարածաշրջանում օրինակելի կենտրոնի ձևավորում՝ համաձայն ՄԿՈՒ համակարգում իրականացվող բարեփոխումների»:

Զարգացման ՌԾ-ում հաստատությունը սահմանել է իր առաքելությունը՝ շեշտադրելով, որ Քոլեջը, որպես կրթական և մշակութային հաստատություն, ունի ազգային և տարածաշրջանային իր կարևոր դերը, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումն է կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թեև Քոլեջն աշխատաշուկայի հատուկ վերլուծություն չի իրականացրել, սակայն տարածաշրջանի գործատուների հետ սերտ կապերի շնորհիվ կարողացել է գնահատել կարիքները և ըստ այդմ որոշել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունները: Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10-ը չափանիշների համաձայն՝ Քոլեջը սահմանել է նպատակներ, ըստ նպատակների՝ խնդիրներ, գործողություններ, առաջընթացի գնահատման ցուցիչներ: Առկա է նաև ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների ժամանակացույց, որտեղ նշված են խնդիրներ, գործողություններ, պատասխանատու բաժին, ակնկալվող արդյունքներ, կատարման ժամանակ: Ուսումնասիրելով գործողությունների ժամանակացույցը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ դրա ձևավորման տրամաբանությունը հստակ չէ. գործառութային շրջանակը դիտարկելով՝ անհստակ է պատասխանատուների ընտրությունը, կատարման ժամկետները որոշակի չեն, քանի որ դրանք հիմնականում նախատեսում են ՌԾ-ի իրականացման ամբողջ ընթացքը:

Դիտարկելով ռազմավարական նպատակները՝ կարելի է նշել, որ օրինակ ՌԾ-ում սահմանվել է հետևյալ նպատակը՝ Ուսումնական հաստատության առաքելությանը համապատասխան կառավարման համակարգի բարելավում ու զարգացում, անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով ապահովված արդյունավետ գործունեության ծավալում: Որպես ակնկալվող արդյունքներ քոլեջը սահմանել է՝ Ղեկավարման նոր մոդելի առկայություն, համագործակցության արդյունավետ համակարգ: Արդյունքների գնահատման չափանիշներ քոլեջը չի առանձնացրել:

Քոլեջն իրականացնում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն՝ ՀՀ ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան: Վայոց Ձորի մարզի 2017-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության ուսումնասիրությունը և դրանում առկա ուղղությունների համադրությունը ցույց է տալիս, որ քոլեջում իրականացվող կրթական ծրագրերը հիմնականում ուղղված են մարզի կարիքների բավարարմանը: Եղեգնաձոր քաղաքի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռող ոլորտներն են արդյունաբերությունն ու շինարարությունը: Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են խաղողի, գինու, էլեկտրասարքավորանքի արտադրությունները, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունները: Քոլեջը 2023-2024 ուսումնական տարում ուսանողներ ունի նախնական մասնագիտական (արհեստագործական) 4՝ Փայտագործություն, Գինեգործություն և հյութերի արտադրություն, Կարի արտադրության տեխնոլոգիա, Խոհարարական գործ և միջին մասնագիտական կրթական աստիճանում 5՝ Իրավագիտություն, Հաշվապահական հաշվառում, Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում, Ֆինանսներ (հեռակա), Զբոսաշրջություն մասնագիտությամբ:

2014 թվականին հաստատված «Շահակիցների կարիքի և բավարարվածության գնահատման կարգ»-ում և «Որակի ապահովման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների ներգարավվածության, հետադարձ կապի քաղաքականություն և ընթացակարգ»-ում քոլեջը սահմանել է իր շահակիցների շրջանակը: Քոլեջի ներքին շահակիցներն են ուսանողները, պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնանօժանդակ կազմը, արտաքին շահակիցներն են շրջանավարտները, գործատուները, դիմորդները և նրանց ծնողները, ոլորտի պետական և մասնագիտական կառույցները և այլն: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ Քոլեջի դասախոսական կազմի ներկայացուցիչները որոշակի մասնակցություն ունեցել են Զարգացման ռազմավարական ծրագրի ձևավորման գործում, իսկ ուսանողների և արտաքին շահակիցների ներգրավվածությունը առավել պասիվ է եղել: Հարկ է նշել, որ արտաքին շահակիցները կարևորում են Քոլեջի նշանակությունը տարածաշրջանի զարգացման ռազմավարության մեջ, փաստում հանրային կյանքում Քոլեջի նշանակալի դերի վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ բոլոր շահակիցների համար կարևոր է քոլեջի առկայությունը որպես մարզում միակ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն: Այսուհանդերձ՝ ո՞ր ուղղությամբ և ինչպե՞ս է զարգանում, ի՞նչ է պլանավորել, իրականում ի՞նչ խնդիրներ ունի,

կա՞ն արդյոք խնդիրների լուծման տարբերակներ. այս հարցերի ուղղությամբ շահակիցները տարբեր պատկերացումներ ունեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շահակիցները կարևորում են նոր մասնագիտությունների բացումը Քոլեջում՝ ապահովելու մասնագետների պատրաստման հնարավորությունների բազմազանեցումը:

Զարգացման ռազմավարական ծրագրով Քոլեջը փորձել է նախատեսել առաջընթացի գնահատման ցուցիչներ: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք հնարավորություն չեն տալիս գնահատել իրականացված աշխատանքների արդյունավետությունը, քանի որ շարադրված են ընդհանրական, ոչ չափելի արդյունքներով (այսպես, օրինակ, որպես առաջընթացի գնահատման ցուցիչներ են առանձնացված՝ արդյունավետ ուսանողական խորհրդատվական և լրացուցիչ ծառայություններ, բազմազանեցված մարզամշակութային ծրագեր): Թեև Քոլեջը հայտարարում է, որ ձգտում է դառնալ «գերազանցության կենտրոն», ներկայումս այդ ուղղությամբ պլանավորումն ու իրականացումը տեսանելի չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը, իր զարգացումը կապելով միջազգային կապեր ձևավորելու հետ, առավելապես կենտրոնացած է դրամաշնորհային ծրագրերի միջոցով ռեսուրսների համալրման վրա: ՌԾ գնահատման նպատակով քոլեջը մշակել է հաշվետվության ձևաչափ, որի միջոցով տեսանելի է դառնում նախատեսված գործընթացների կատարումը՝ նշելով գործողությունը կատարվել է, թե ոչ: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ դրա միջոցով չեն վերլուծվում պլանավորված, սակայն չկատարված գործողությունների պատճառները, հետագա անելիքները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է այն հանգամանքը, որ քոլեջը շարունակաբար քայլեր է ձեռնարկում դառնալու տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետներ պատրաստելու կարևորագույն դերակատար: Դրական է, որ Քոլեջը կարողացել է ձևավորել սերտ կապեր տեղական գործատուների հետ, ինչը թույլ է տվել մասնագիտական կրթությունը համապատասխանեցնել տարածաշրջանի կարիքներին: Փորձագիտական խումբը շեշտադրում է այս կապերի շարունակական զարգացման անհրաժեշտությունը, դրանց կիրառմամբ նաև աշխատաշուկայի պահանջների վերլուծությունը, ինչը կնպաստի կրթական ծրագրերի շարունակական բարելավմանը, մարզի զարգացմանն ու համապատասխան մասնագիտական կարողություններով աշխատուժի ձևավարմանը: Փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրում շահակիցների, մասնավորապես՝ ուսանողների և արտաքին գործընկերների, պասիվ ներգրավվածությունը սահմանափակում է նրանց կարիքների արտացոլումը ՌԾ նպատակներում: Մասնակցային պլանավորումը կօգնի ստեղծել ավելի հավասարակշռված և իրականանալի նպատակներ, որոնք կբավարարեն շահակիցների լայն շրջանակի կարիքները:

Ռազմավարական պլանավորման գործընթացների լավարկման նպատակով քոլեջը կարիք ունի խմբագրելու գործողությունների ժամանակացույցը. պատասխատանատուների հստակ սահմանումը, իրականացման ժամկետների որոշակիացումը՝ նշելով ՌԾ կատարման

ժամկետի կոնկրետ կարճաժամկետ կամ միջնաժամկետ հատվածը, հնարավորություն կտա քոլեջին հետևել ծրագրի կատարման արդյունավետությանը և ապահովել առավել որակյալ կառավարում: Այս համատեքստում փորձագիտական խումբը կարևոր է համարում ռազմավարության գնահատման կոնկրետ և չափելի ցուցիչների մշակման անհրաժեշտությունը, ինչը ևս կնպաստի խնդիրների դուրսբերմանը և առաջընթացի գնահատմանը: Դրանք թույլ կտան գնահատել կատարված աշխատանքների արդյունավետությունը և տեսանելի դարձնել ծրագրի արդյունքները շահակիցների համար:

Քոլեջը նշում է իր նպատակների մեջ «գերազանցության կենտրոն» դառնալու ձգտումը: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է գործողությունների և պլանների հստակեցումը: Նման կենտրոն դառնալու համար քոլեջը կարիք ունի գնահատելու իր կարիքները, սահմանելու առավել հստակ նպատակներ, իրականացնելու իր ներուժին ու մարդկային ու նյութական ռեսուրսներին համահունչ պլանավորում: Միևնույն ժամանակ, Քոլեջը հիմնականում կենտրոնանում է միջազգային դրամաշնորհային ծրագրերի միջոցով նյութական ռեսուրսների համալրման վրա, սակայն կարևոր է նաև ուշադրություն դարձնել տեղական ռեսուրսների օպտիմալ օգտագործմանը, քոլեջի կապերի զարգացմանն ու տեղական գործընկերների հետ համագործակցության ընդլայնմանը, ինչը կնպաստի ենթակառուցվածքների բարելավմանը և Քոլեջի կայուն զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի տարածաշրջանի համատեքստին համապատասխան առաքելություն, իրականացնում է մարզի կարիքներին ուղղված կրթական ծրագրեր, ներքին և արտաքին շահակիցները կիսում են քոլեջի առաքելությունը, կարևորում են քոլեջի դերը տարածաշրջանում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՁՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՁՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

ՎՁՏՊՔ-ի ընթացիկ կառավարումն իրականացվում է Կառավարման խորհրդի և տնօրենի կողմից: Կառավարման խորհուրդն իրականացնում է քոլեջի կոլեգիալ կառավարումը և բաղկացած է 11 անդամից, որի կազմը հաստատվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից 2022 թվականին: Կառավարման Խորհուրդը քննարկում և

հաստատում է քոլեջի ռազմավարական ծրագրերը, նորմատիվ փաստաթղթերը, ուսումնական գործընթացին առնչվող որոշումները, բյուջեի նախահաշիվը, ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունները, ստորաբաժանումների և տնօրենի հաշվետվությունները և այլն: Խորհուրդի նիստերն անցկացվում են հաստատված աշխատակարգով: Խորհրդում ներգրավված են 3 ուսանող, 2 դասախոս և արտաքին շահակիցներ պետական և մասնավոր հատվածից: Հարկ է նշել, որ խորհրդում ընդգրկված 6 անդամներ նախկինում ևս ներգրավված են եղել կազմում և քաջատեղյակ են քոլեջի խնդիրերին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նրանք հիմանակնում շեշտադրում են շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման անհրաժեշտությունը, ինչպես նաև մարզի պահանջները հաշվի առնելով՝ առաջարկել են 2022-2023 ուստարվանից ընդունելություն իրականացնել նաև «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի Կառավարման խորհրդի անդամները պատրաստակամ են աջակցելու հաստատությանը նոր համագործակցություններ հաստատելու, պրակտիկայի վայրերի հետ կապեր ստեղծելու հարցերում, այսուհանդերձ ֆինանսական նոր աղբյուրների ներգրավման ուղղությամբ առաջարկներ չեն ներկայացվել խորհրդի կողմից:

Միաժամանակ քոլեջում գործում են՝ տնօրինական, մանկավարժական, դաստիարակչական և ուսանողական խորհուրդներ:

Տնօրինական խորհուրդը քոլեջի խորհրդակցական մարմինն է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջինիս կանոնակարգը և կազմը վերանայվել են 2023թ.-ին. կազմում ընդգրկվել է ուսանողական խորհրդի նախագահը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո Տնօրինական խորհրդում դասախոսների կողմից առաջարկվել է իրականացնել վարչական, դասախոսական եւ ուսումնաօժանդակ կազմի պարտականությունների վերաբաշխում, կատարած աշխատանքների գնահատում: Արդյունքում 2023թ.Կառավարման խորհուրդ հաստատման է ներկայացվել «ՎՁՏՊՔ դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմերի աշխատողների աշխատանքային գործունեության գնահատման և խրախուսման կարգ»-ը, վերջինիս հիման վրա Քոլեջը պլանավորում է մեկնարկել աշխատակիցների գնահատման գործընթաց: Փորձագիտական այցից պարզվեց, որ Տնօրինական խորհրդում քննարկվում են նաև ուսանողների կողմից բարձրացված հարցերը, այսպես, օրինակ, վերջիներիս առաջարկությամբ ուսանողների համար կազմակերպվել են Java Script ծրագրավորման լեզվի լրացուցիչ դասընթացներ:

Ուսումնամեթոդական գործունեությունը, ՄԿԾ-ների, ուսումնական պլանների մշակումը, մասնագիտական խորհրդատվությունները, դասալսումները, սկսնակ դասախոսների հետ աշխատանքները իրականացվում են Քոլեջում գործող չորս ամբիոններում: 2021թ.-ին ամբիոնները քննարկել և ուսումնամեթոդական խորհրդին են ներկայացրել գնահատման նոր մեթոդի կիրառման հնարավորությունները: Արդյունքում փորձնական երկու կուրսերում կիրառվել են գիտելիքի ստուգման Kahoot և Quiziz

համակարգի առցանց գործիքները: 2022թ.-ին այն կիրառվել է բոլոր մասնագիտություններում: Լրացվել են համապատասխան ձևաթղթեր, քննարկել ամբիոնների միջև: Հարկ է նշել, որ այդ ուղղությամբ արդյունավետության գնահատում չի իրականացվել: Փորձագիտական այցից պարզվեց, որ ամբիոնների և ուսումական մասի միջև կապը սերտ է:

Քոլեջի որակի ներքին ապահովման գործընթացների կազմակերպման համար ձևավորվել են համապատասխան ՈՆԱՀ հանձնաժողովներ: Վերջիներս՝ գործընթացները իրականացնում են հասարակական հիմունքներով: ՈՆԱՀ-ի կողմից կազմակերպվել են տարաբնույթ հարցումներ, սակայն հարցման արդյունքներն առայժմ որոշումների հիմք չեն հանդիսացել, մյուս կողմից՝ շահակիցները ոչ միշտ են հետաքրքրված հարցման տվյալներով:

Ուսանողական խորհրդի ներկայացուցիչների կողմից Կառավարման խորհրդում բարձրացվել են պրակտիկանների վայրի ընտրության և իրականացման վերաբերյալ հարցեր, ինչպես նաև ՈւԽ առաջարկով «Անուշավան և Օֆիկ Աբրահամյաններ» կրթական հիմնադրամից քոլեջին տրամադրվել են նոր գերիզոր համակարգիչներ, գինեգործության արտադրամասի սարքավորումներ:

Նախորդ փորձաքննության արդյունքում քոլեջը խորհրդատվություն է ստացել հստակեցնել վարչական աշխատակիցների գործառութային շրջանակները: 2023թ. հաստատվել է Քոլեջի կազմակերպական նոր կառուցվածքը՝ այն հարմարեցնելով ռազմավարական խնդիրների իրականացմանը: Վերանայվել, լրամշակվել և հաստատվել են որոշ ստորաբաժանումների (Կարիերայի ստորաբաժանում, Հաշվապահություն և այլն) կանոնակարգեր, առանձին ստորաբաժանումների կրկնվող, ինչպես նաև բացակայող կամ հստակեցման կարիք ունեցող գործառույթները, կատարվել է Քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումների միջև լիազորությունների, գործառույթների ու պատասխանատվության բաշխում, մշակվել են պաշտոնի անձնագրեր: Քոլեջի նոր կազմակերպական կառուցվածքում ներկայացված են ստորաբաժանումների միջև առկա հորիզոնական և ուղղահայաց կապերը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջը ՌԾ-ի նպատակների իրականացման համար, ինչպես նաև կարևորելով պրակտիկաների առավել արդյունավետ կազմակերպումն ու իրականացումը, 2022թ. ներդրել են պրակտիկայի ղեկավարի և մեթոդիստի հաստիքները: 2023թ. դասախոսական կազմը համալրվել է նոր կադրերով:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ Քոլեջի հաստիքային աշխատողներն իրականացնում են մեկից ավելի գործառույթներ, օրինակ՝ ուսումական մասի քարտուղարը միևնույն ժամանակ զբաղեցնում է մեթոդիստի, դասախոսի հաստիքները և իրականացնում է ամբիոնի վարիչի գործառույթներ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջն արդյունավետ է համարում թիմը բազմագործառույթ աշխատակիցներով համալրումը, սակայն աշխատակիցների գործունեության որակի և արդյունավետության գնահատում չի իրականացրել:

Ֆինանսների բաշխումը քոլեջն իրականացնում է տարեկան պլանավորմամբ՝ ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծի հիման վրա: Ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատակիցների աշխատավարձեր (85%), ծառայությունների և ապրանքների ձեռք բերման դիմաց վճարումներ (4,69%), կրթաթոշակներ (10%) և այլ ծախսեր (0,31%):

Փաստաթղթերի դիտարկումից և փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՌԾ-ին համապատասխան ֆինանսական պլանավորում դեռևս չի իրականացվել՝ գնահատելու համար, թե որքան ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ ՌԾ նպատակների իրականացման համար և դրանց ներդրումն ինչ արդյունավետության կարող է հանգեցնել: Օրինակ՝ Քոլեջը իր ՌԾ-ով որպես խնդիր սահմանել է՝ Կրթական ծրագրերի կարիքներին համապատասխան քոլեջի ուսումնական և լաբորատոր բազայի արդիականացում, համալրում և զարգացում, Բժշկական ծառայության ապահովում: Որպես արդյունք ակնկալում է՝ համալրված լաբորատոր բազա, բուժկետի առկայություն կամ բուժօգնության ծառայություն, սակայն քոլեջը այդ ուղղությամբ ֆինանսական պլանավորում չի նախատեսել:

Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջում արևային կայան են տեղադրել՝ իրականացնելով խնայողություն կոմունալ ծախսերում, արդյունքում մոտ մեկ միլիոն դրամ գումար խնայվել է: Քոլեջը գրանցել է ֆինանսական եկամուտների 8,9% աճ՝ դրամաշնորհային ծրագրերի, կարճաժամկետ ուսուցման ծրագրերի միջոցով, ձեռք է բերել համապատասխան ռեսուրսներ, իրականացրել է վերապատրաստումներ, Քոլեջի բոլոր աշխատակիցներին տրամադրել է դրամական խրախուսում: Ռեսուրսների դիտարկման ընթացքում պարզվեց, որ լսարանները հագեցած են անհրաժեշտ ուսումնական նյութերով և մասնագիտական սարքավորումներով:

Քոլեջի կառավարման համակարգը ապահովում է դասախոսական և ուսանողական համակազմերի ընդգրկվածությունը կառավարման, մանկավարժական և տնօրենական խորհուրդներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն իրենց կրթական կարիքների բավարարման համար առավելապես դիմում են կուրսղեկներին, ամբիոններին, վերջիներս էլ՝ կառավարման մարմիններին: Օրինակ, ուսանողների առաջարկությամբ բացվել են մի շարք խմբակներ՝ պատմության խմբակ՝ «Երիտասարդ հայրենասերներ», «Անատոմիա» և «Անգլերեն լեզու» խմբակներ: Վերջիներիս նախաձեռնությամբ և Project Harmony կազմակերպության հետ համագործակցությամբ բացվել է «Ռեստարտ» կենտրոնը: Դասախոսական կազմի զգալի մասը նաև վարչական աշխատակիցներ են, ինչով պայմանավորված արդեն իսկ ներգրավված են տարբեր խորհուրդներում: Փորձագիտական այցից նաև պարզ դարձավ, որ նրանք ներգրավված են ընթացակարգերի քննարկման գործընթացներում: Ռազմավարական պլանավորման գործընթացներին ներքին շահակիցների մասնակցությունը դեռ թույլ է:

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ռազմավարական՝ երկարաժամկետ և ընթացիկ տարեկան՝ կարճաժամկետ պլանավորումներով: Քոլեջի 2021-2026թթ. ՌԾ-ում

ներկայացված նպատակները հստակ են, սակայն գնահատման ցուցիչները հստակեցված չեն: Քոլեջի ստորաբաժանումներն ունեն 2021-2026 թթ.-ի Ռազմավարական ծրագրեր, որոնք կառուցվածքային առումով նույնական են քոլեջի 2021-2026թթ. ՌԾ-ի հետ: Նախորդ հավատարմագրումից հետո ստորաբաժանումների աշխատանքային պլանները բարելավվել են, ավելացվել են բացի ստորաբաժանումների գործառութներից նաև ՌԾ-ից բխող գործառույթները: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ Քոլեջի բոլոր ստորաբաժանումներն ունեն աշխատանքային պլաններ, որոնց հիման վրա ներկայացնում են կիսամյակային և տարեկան հաշվետվություններ: Այսուհանդերձ, պլանավորման փաստաթղթերի դիտարկումը ցույց տվեց, որ որոշ դեպքերում՝ օրինակ, ՈԱ ենթակառուցվածքի զարգացման ՌԾ-ի իրականացման ժամանակացույցում՝ գործողությունների իրականացման ժամկետային տիրույթները բավականին լայն են, ընդգրկում են ժամանակացույցի ամբողջ ընթացքը և նախորդ տարիների պլանավորման համեմատ գործողությունները երբեմն կրկնվում են, իսկ որոշ ստորաբաժանումների ՌԾ-ով նշված գործողությունների համար սահմանված չեն վերջնարդյունքներ: Օրինակ, Որակի ապահովման ենթակառուցվածքի զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույցում (2021-2026թթ.) որպես գործողություններ պլանավորել են՝ 1.Բարելավել արտաքին կապերին ու միջազգայնացմանը նպաստող ընթացակարգերը և մեխանիզմները: 2.Մեխանիզմեր մշակել մարզի զարգացմանն ուղղված միջազգային ծրագրերում ընդգրկվելու նպատակով: Սակայն ինչ արդյունք են ակնկալում սահմանված գործողություններից, նշված չէ: ՈՆԱՀ-ի կողմից ներդրվել են տարեկան աշխատանքային պլանների մշտադիտարկման մեխանիզմեր, որոնց արդյունավետության գնահատում Քոլեջը չի իրականացրել:

Նախորդ փորձաքննության արդյունքում քոլեջը ստացել է խորհրդատվություն ապահովելու հաստատության գործունեության վրա ազդող գործոնների համընդհանուր, բազմակողմանի ուսումնասիրություն և վերլուծություն: Փորձագիտական այցից պարզվեց, որ Քոլեջի ղեկավարությունը գործունեության վրա ազդող գործոնները ուսումնասիրում է գործատուների և դասախոսների հետ անմիջական զրույցների, ուսանողների պրակտիկաների արդյունքների քննարկումների միջոցով: Քոլեջն իր գործունեության վրա ազդող և պլանավորման մեջ ուղղորդող գործոններից է համարում շահակիցներից ստացած արձագանքները, դրա համար անցկացնում է հարցումներ, քննարկումներ, ինքնագնահատում և SWOT վերլուծություն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ երբեմն որոշումներն ընդունվում են տվյալ իրավիճակի հանգամանքները հաշվի առնելու միջոցով, կրթական ծրագրերի իրականացման ուղղությունները նաև գործատուների հետ համագործակցելու արդյունքում: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կիրառվող մեխանիզմները դեռ չեն ապահովում Քոլեջի բոլոր ուղղություններն ընդգրկող տվյալների վրա հենված վերլուծություններ: Փաստաթղթերի դիտարկումից պարզվեց, որ առկա չեն վերլուծություններ աշխատաշուկայի, մարզի զարգացման ծրագրերում ամրագրված առաջնահերթությունների հետ համադրման վերաբերյալ:

Այդուհանդերձ, նախորդ հավատարմագրումից հետո Քոլեջը կրթական ծրագրերի իրականացման համար ձեռք է բերել համապատասխան ռեսուրսներ (օգտագործելով նաև նվիրատուների ռեսուրսները, դրամաշնորհային ծրագրերը), համալրել է դասախոսական կազմը, ապահովել է ուսանողների թվի աճ՝ 19,5%-ով, ընդլայնել է արտաքին շահակիցների շրջանակը, ներդրել է «Կարի արտադրության տեղնոլոգիա» մասնագիտությունը: Հաշվի առնելով տարածաշրջանի զարգացման հեռանկարները և դուալ համակարգով ուսումնառության կազմակերպման փորձառությունը՝ Քոլեջը պլանավորել է դուալ կրթություն իրականացնել «Զբոսաշրջություն» մասնագիտությամբ:

Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների որոշակի ուսումնասիրություն իրականացվում է նաև կարիերայի կենտրոնի կողմից՝ արտաքին շահակիցների հետ համագործակցության և հետադարձ կապ ապահովելու միջոցով: Տեղեկատվության հավաքագրումն ու մշակումը իրականացվում է հիմնականում ոչ ֆորմալ հարթակներում՝ գործատուների հետ հանդիպումների ընթացքում, ինչի արդյունքում գործատուների և գործատու-դասախոսների շրջանակը ընդլայնվել է:

Քոլեջը փորձ է կատարել բոլոր գործընթացներում ներդնել ՊԻԳԲ սկզբունքները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Քոլեջում առկա հիմնական գործընթացները գտնվում են պլանավորման և իրականացման փուլերում: Փաստաթղթերի զգալի մասը մշակվել է վերջին երկու տարիների ընթացքում: Ըստ ինքնավերլուծության՝ ՈՆԱՀ-ի կողմից մշակվել են 21, լրամշակվել 29 իրավական փաստաթղթեր:

Քոլեջն ունի պաշտոնական կայք և ֆեյսբուքյան էջ, որտեղ լուսաբանվում են քոլեջի առօրյա գործընթացները, տեղադրվում են ՄԿԾ-ներ, փաստաթղթեր, հաշվետվություններ, ներքին իրավական ակտեր: Կայքը և ֆեյսբուքյան էջն ունեն հետադարձ կապի մեխանիզմ՝ շահակիցների կողմից արձագանք ստանալու համար: Ֆեյսբուքյան էջի գործիքակազմը հնարավորություն է տալիս շահակիցներին գնահատել հրապարակումները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չի մշակել հրապարակումները գնահատելու հստակ քաղաքականություն և չի իրականացնում համալիր վերլուծություններ հրապարակվող տեղեկատվության տարածման արդյունավետության վերաբերյալ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում է, որ Քոլեջը քայլեր է իրականացրել կառավարման համակարգի բարելավման ուղղությամբ և կարևորում է դրանց արդյունավետության շարունակական մշտադիտարկումը և բազմակողմանի վերլուծությունը իրականացվող գործընթացների բարելավման համար: Կառուցվածքային փոփոխությունները և ստորաբաժանումների կանոնակարգերի վերանայումը կարող են խթանել գործընթացների հստակեցումը, բայց ընթացիկ խնդիրների բացահայտման համար անհրաժեշտ է շարունակաբար գնահատել դրանց արդյունավետությունը: Կարևոր է, որ քոլեջը վերլուծի իրականացված փոփոխությունների արդյունավետությունը՝ համոզվելու, որ դրանք բխում են ռազմավարական նպատակներից և տվյալներ ստանալու բարելավումների համար:

Քոլեջի եկամուտների որոշակի աճը, ձեռք բերված ֆինանսական միջոցները և կարճաժամկետ ծրագրերը վկայում են առաջընթացի մասին, սակայն ֆինանսական ռեսուրսների երկարաժամկետ պլանավորման բացակայությունը և ռեսուրսների բաշխման ու ռազմավարության կապի թույլ լինելը կարող են խոչընդոտ դառնալ բոլոր ռազմավարական նպատակների իրագործման համար:

Շահակիցների կարիքների կարևորումը և նրանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին ցույց է տալիս, որ քոլեջը շարժվում է ներգրավվածության և թափանցիկության բարձրացման ուղղությամբ: Այս գործընթացները կլինեն առավել արդյունավետ, եթե շահակիցների մասնակցությունը դառնա լիարժեք՝ ներգրավելով շահակիցների ավելի մեծ շրջանակի: Կարևոր է, որ շահակիցների կարիքներն ունենան իրական ազդեցություն կառավարչական որոշումների կայացման վրա:

Քոլեջի ռազմավարական պլանավորման մեջ տեսանելի չէ նախատեսվող ռեսուրսների և արդյունավետության ցուցիչների փոխկապակցումը: Առանց արդյունավետության հստակ ցուցիչների՝ դժվար կլինի գնահատել ռազմավարական նպատակների իրագործման առաջընթացը, ինչը կարող է բարդացնել ռեսուրսների արդյունավետ բաշխումը: Այս համատեքստում փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի կառավարման մոտեցումները առկա սակավ ռեսուրսների պայմաններում ապահովելու քոլեջի գործունեության շարունակականությունը և զարգացումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը որոշակի քայլեր է ձեռնարկել հաշվետվողականության մեխանիզմների բարելավման ուղղությամբ: Հաշվետվությունների և ինքնավերլուծությունների ավելի վերլուծական մոտեցումը կարող է խթանել արդյունավետության գնահատմանը և բարելավումների հիմնավորված առաջարկների մշակմանը, ինչը թույլ կտա քոլեջին արձագանքել զարգացման կարիքներին:

Չնայած քոլեջը որոշակիորեն հավաքագրում է տեղեկատվություն տարբեր աղբյուրներից, տվյալահենք որոշումների կայացման գործընթացները դեռևս լիարժեք չեն: Առանց համալիր վերլուծությունների՝ դժվար է ապահովել տվյալների վրա հիմված կառավարման համակարգ, ինչը կարող է նվազեցնել կառավարման արդյունավետությունը և որոշումների հիմնավորվածությունը: Փորձագիտական խումբը շեշտադրում է այն հանգամանքը, որ քոլեջի ռազմավարական որոշումների կայացման գործընթացը պետք է առավելապես հիմված լինի մանրամասն և օբյեկտիվ տվյալների վերլուծության վրա՝ ապահովելու կառավարման գործընթացների շարունակական բարելավումը և տվյալահենք որոշումների կայացումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը քայլեր է ձեռնարկել կառավարման համակարգի բարելավման ու վարչարարության գործընթացների լավարկման ուղղությամբ, իր նպատակների իրականացման համար տրամադրում է համապատասխան մարդկային ռեսուրսներ, քայլեր ձեռնարկում ֆինանսական ռեսուրսների հայթայթման ու ռազմավարական նպատակների իրագործմանն ուղղորդելու նպատակով,

արտաքին շահակիցների հետ համագործացությունը նպաստում է տարածաշրջանին անհրաժեշտ մասնագիտությունների իրականացմանը, դասավանդման գործընթացում գործատու դասավանդողների ներգրավմանն ու ռեսուրսների համատեղ օգտագործմանը, ներքին շահակիցներն ընդգրկված են կարիքների քննարկման ու որոշումների կայացման գործընթացներում, ՄՈՒՀ-ի ստորաբաժանումներն իրականացնում են կարճաժամկետ ու երկարաժամկետ պլանավորում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՁՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

ՎՁՏՊՔ իրականացնում է 5 մասնագիտություններով միջին մասնագիտական կրթական ծրագրեր՝ «Զբոսաշրջություն», «Հաշվապահական հաշվառում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Իրավագիտություն», «Ֆինանսներ»: Նշված կրթական ծրագրերից չորսում իրականացվում է առկա ուսուցում՝ վճարովի և անվճար հիմունքներով: Հեռակա ուսուցում իրականացվում է միայն «Ֆինանսներ» մասնագիտությամբ:

ՎՁՏՊՔ-ն նաև իրականացնում է 4 մասնագիտություններով նախնական մասնագիտական կրթական ծրագրեր՝ «Խոհարարական գործ», «Փայտագործություն», «Գինեգործություն և հյութերի արտադրություն», «Կարի արտադրության տեխնոլոգիա»:

Քոլեջում դեռևս 2007թ.-ից կարճաժամկետ ծրագրեր իրականացնելու համար բարեգործական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ ստեղծվել էր կարի արհեստանոց, որը 2012թ.-ին համալրվել էր ռեսուրսներով Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: 2022թ.-ին քոլեջի Կառավարման խորհուրդը, մարզի կարիքներից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով ռեսուրսների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունը և կարի արհեստանոցում առկա նյութատեխնիկական հարուստ հնարավորությունները, 2022-2023 ուստարվա ընդունելության պահանջարկում ներառվել է «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությունը: Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ տարածաշրջանում համապատասխան որակավորում (դերձակ) ունեցող մասնագետների պահանջարկը մեծ է: «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությունում քոլեջը

հավաքագրել է վեց ուսանող, հաջորդ տարիներին ակնկալում է ավելի շատ ուսանողներ ընդգրկել՝ հաշվի առնելով համապատասխան ռեսուրսների առկայությունը և շահակիցների հետաքրքրվածությունը:

Կրթական ծրագրերից «Գինեգործություն և հյութերի արտադրություն»-ը իրականացվում է դուալ ձևաչափով, որի որոշ մոդուլներ իրականացվում են գործատուների մոտ՝ ԱՀՈ սկզբունքով: Քոլեջը ձեռք է բերել համապատասխան փորձառություն և քայլեր է ձեռնարկում «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի դուալ ձևաչափով իրականացման ուղղությամբ:

Քոլեջում կրթություն է ստանում 349 ուսանող: ՄԿԾ-ներն իրականացվում են սահմանված պետական կրթական չափորոշիչների շրջանակում: Կատարվում են միայն մոդուլների տեսական և գործնական պարապունքների ժամաքանակների որոշ փոփոխություններ՝ չափորոշիչներով նախատեսված փոփոխությունների կատարման թույլատրելի սահմաններում:

Հանրակրթական առարկաների ծրագրերի մշակումն իրականացվում է ավագ դպրոցների ծրագրերի հիման վրա: Դասախոսները կարող են իրենց հայեցողությամբ օգտագործել նաև ՀՀ ԿԳՄՄՆ կողմից երաշխավորված ծրագրերը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բոլոր կրթական ծրագրերում առկա են ուսումնական պլաններ, մոդուլային և առարկայական ծրագրեր, կրթական ծրագրերը մշակվել են ՊԿՉ-ների հիման վրա:

Ուսումնական մասի կողմից մշակվել են բոլոր ՄԿԾ-ների մասնագրերը, որոնք մատնանշում են ՄԿԾ-ների նպատակների և ակնկալվող կրթական վերջնարդյունքների, ընտրված դասավանդման, ուսումնառության և գնահատման ամփոփ նկարագրությունները: Ներկայացված են մասնագիտական առարկաներ դասավանդող դասախոսի որակավորման նկատմամբ պահանջները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄԿԾ-ով իրականացվող մոդուլների և ուսումնառության ակնկալվող արդյունքների (ՈՒԱ) համապատասխանությունը ներկայացված չեն, ինչպես նաև բացակայում են ՈՒԱ-ի և ՈԱՇ-ի համադրելիության քարտեզագրումները: Մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ դասավանդողները ոչ միշտ են պատկերացնում՝ նախատեսված որ մոդուլով ՄԿԾ-ի որ վերջնարդյունքն են ապահովում:

Դասավանդող մասնագետների կողմից մշակվել են մոդուլային ուսումնական ծրագրեր: Ծրագրերը կազմելիս դասախոսներն առաջնորդվում են ՊԿՉ-ով, տվյալ մասնագիտության ուսումնական պլանով, ՀՀ ԿԳՄՍ նախարարության որոշումներով և հրամաններով: ՄԿԾ-ները կազմելիս հաշվի են առնվում նաև աշխատաշուկայի պահանջներն ու առանձնահատկությունները ընտրովի առարկաները սահմանելու, պահուստային ժամերը բաշխելու համար: Այսպես, օրինակ, կարելի է նշել՝ «Զբոսաշրջություն» ՄԿԾ-ում ներդրվել են «Միկրոտնտեսագիտության ներածություն» և «Մակրոտնտեսագիտության ներածություն» առարկանները: «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ում՝ «Ավտոմատացված համակարգերի կառուցման հիմունքներ»,

«Տեղեկատվության ապահովման տեխնիկական միջոցներ» առարկաները: Ընտրովի առարկաների ծրագրերը մշակելիս ՎԶՏՊՔ-ն հաշվի է առնում այն հանգամանքը, թե տվյալ առարկան որքանով է նպաստում ուսանողների հմտությունների և կարողությունների զարգացմանը: Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ ՄԿԾ-ների մշակման և ներդրման գործընթացներին արտաքին շահակիցների ներգրավվածությունը թույլ է արտահայտված:

Քոլեջում գործում է վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, դասախոսները ազատ են ընտրելու իրենց դասավանդման մեթոդները և բարելավելու դրանք: Դասավանդման մեթոդի ընտրությունը բխում է դասավանդվող առարկայի /մոդուլի/ առանձնահատկությունից և սահմանված ուսումնառության վերջնարդյունքներից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները կարևորում են դասավանդման և ուսումնառության նորարարական մեթոդները, հիմնականում կիրառում են ինտերակտիվ մեթոդներ:

Փորձագիտական այցից նաև պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի իրականացման մեջ ներգրավված են պրակտիկ ոլորտից վարպետներ, ովքեր իրենց փորձով աջակցում են ուսանողներին ավելի լավ յուրացնելու նոր տեսական նյութը և փոխկապակցում են պրակտիկ ոլորտը ուսումնառության հետ, փորձում են ուսանողների մասնագիտական մտածողությունը ձևավորել իրավիճակային խնդիրների և վերլուծական հանձնարարականների միջոցով:

Մասնագիտական քննարկումներից պարզ դարձավ, որ մոդուլային ծրագրով դասավանդող բոլոր դասախոսները կազմել են փաթեթներ, որոնցում ներառված են ուսումնական ծրագիրը, աշխատանքային - թեմատիկ պլանը, ուսումնառության և դասավանդման նյութերը, ուսումնառության պլանը, դիդակիկ նյութերը: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կրթական ծրագրով իրականացվող մոդուլների ուսումնառության նյութերը, բացի տեսական նյութից, պարունակում են առաջադրանքներ, որոնք հնարավորություն են տալիս ուսանողների մոտ զարգացնել գործնական հմտություններ: Ուսանողի ինքնուրույն իմացական գործունեության զարգացման համար դասախոսները հաճախ հանձնարարում են խմբային և անհատական աշխատանքներ: Այսպես օրինակ, «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության «Տեղեկատվության անվտանգության ապահովում» մոդուլի շրջանակներում ուսնաողներին հանձնարարվում է տրված տեքստը գաղտնագրել և վերծանել, իսկ «Դինամիկ WEB կայքերի նախագծում» մոդուլում հանձնարարվում է գործարկել վեբ սերվիս և ստեղծել պարզագույն կայք: Ուսանողները ստեղծում են կայք, առաջադրանքը կատարելու համար տարբեր խմբերի են բաժանվում՝ ապահովելով յուրաքանչյուր ուսանողին առանձին համակարգչից օգտվելու հնարավորությունը: «Խոհարարական գործ» մասնագիտության «Սննդամթերքի ջերմային մշակում» մոդուլի շրջանակներում հանձնարարվում է ուսանողին տարբեր մթերքների ջերմային մշակում՝ առաջադրված եղանակով: Ուսանողները առաջադրանքը կատարում են խմբերի բաժանվելով և սահմանված ժամանակահատվածում: Ուսանողները գործնական պարապմունքները իրականացնում են ուսումնական խոհանոցներում՝ փոքր խմբերով: Պրակտիկաների վայրեր այցելությունից և

շահակիցների հետ քննարկումներից պարզ դարձավ, որ «Զբոսաշրջություն» մասնագիտությամբ ուսանողներն իրենց իսկ կազմած երթուղով ճանաչողական այցեր են կազմակերպում մարզի պատմամշակութային վայրեր, հանդես գալիս որպես զբոսավար, ներկայացնում հնամենի վայրերի պատմությունը երկու լեզուներով:

Քոլեջում ուսանողների հետազոտական կարողությունների զարգացման նպատակով կրթական ծրագրերում ներառվել են կուրսային և դիպլոմային աշխատանքների կատարման հանձնարարականներ: Այպես օրինակ՝ «Զբոսաշրջություն» մասնագիտության «Ձեռներեցություն» մոդուլի շրջանակներում ուսանողներն ուսումասիրում են մարզերի մշակութային օջախները՝ դրանք հետազայում դիտարկելով որպես երթուղու օբյեկտներ և վերածելով տուր փաթեթների: Այդ համատեքստում ուսանողները նախագծել են ստեղծել «Often» կազմակերպությունը, շահակիցներին առաջարկել իրենց կողմից կազմված տարբեր տուր փաթեթներ:

Փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ կուրսային աշխատանքի թեմայի առաջադրումը կատարվում է դասախոսների կողմից և չի համակարգվում ամբիոնների միջոցով: Ուսանողը կարող է իրականացնել կուրսային աշխատանք նաև ոչ մասնագիտական առարկաների շրջանակում, որոնց կատարումս ուսումական պլանով նախատեսված չէ: Ուսումասիրությունը ցույց տվեց, որ դասախոսները հաճախ հանձնարարում են ռեֆերատներ և ինքնուրույն աշխատանքներ՝ առանց տվյալ կիսամյակում ուսանողի ծանրաբեռնվածությունը դիտարկելու: Ուսանողների կողմից կատարված աշխատանքների ուսումասիրությունը ցույց տվեց, որ կան դեպքեր, երբ չկա նշված օգտագործված գրականության ցանկ, տեքստում չկան աղբյուրներին կատարված հղումներ և այլն: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջում ուսանողներին տրվող հետազոտական թեմաների ուղղությունները, դրանց նկատմամբ ներկայացվող պահանջները ևս հստակեցված չեն:

2014 թ.-ից շրջանառության մեջ է դրված «Ուսանողների գիտելիքների գնահատման, հսկման և բողոքարկման համակարգի ընթացակարգ» փաստաթուղթը: Սույն փաստաթուղթը ներառում է սովորողների գիտելիքների ստուգման բոլոր ձևերը (ընթացիկ և միջանկյալ ստուգումներ, կիսամյակային ստուգարքներ և քննություններ, պետական ամփոփիչ ատեստավորում), ինչպես նաև գնահատման, բողոքարկման, վերահանձնման գործընթացը:

Քոլեջում ընթացիկ գնահատման հստակ չափանիշներ սահմանված չեն, սակայն, մոդուլային ծրագրերում ներկայացված է յուրաքանչյուր արդյունքի գնահատման ձևը, որը կարող է լինել թեստ, առաջադրանք, բանավոր հարցեր, գործնական առաջադրանքներ և այլն: Գնահատման թերթիկների ուսումասիրությունը ցույց տվեց, որ յուրաքանչյուր արդյունքի գնահատման համար առանձնացված են բանավոր հարցումներ, գրավոր թեստեր և գործնական առաջադրանքներ, կախված առաջադրանքների քանակից, դրանց կատարումից, ճիշտ իրականացված քայլերից ուսանողն ունենում է «անցնում» կամ «չի անցնում» արդյունքը: Յուրաքանչյուր կիսամյակի վերջում մասնագիտական մոդուլները ևս մեկ անգամ ամփոփվում են:

Հիմք ընդունելով նախորդ հավատարմագրման փորձագիտական խորհրդատվությունը՝ Զարգացնել գնահատման բազմագործոնային համակարգը և այն տարածել բոլոր ՄԿԾ-ների վերջնարդյունքների վրա՝ հատկապես շեշտադրելով գործնական հմտությունների գնահատումը, քոլեջը ներդրել է ուսանողների առաջընթացը գնահատող պորտֆոլիոներ։ ՄԿԾ-ներում ուսումնառող յուրաքանչյուր ուսանողի պորտֆոլիոյում դասախոսական կազմը հավաքագրում է վերջիններիս ընթացիկ աշխատանքները։ Դրանց ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «Զբոսաշրջություն» ՄԿԾ-ի պորտֆոլիոներում տեղ են գտնում ուսանողների կողմից մշակված զբոսաշրջային փաթեթները, մոդուլի յուրացման ամփոփ թերթիկները, գնահատման թերթիկները, ընթացիկ աշխատանքները /սահիկաշարերը, ինքնուրույն աշխատանքները և այլն/։

Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ դասախոսները տեսական գիտելիքները գնահատում են հարց ու պատասխանի, թեստային առաջադրանքների և ռեֆերատների միջոցով, գործնական առաջադրանքները համապատասխան հանձնարարականների կատարման միջոցով։ Բոլոր վերջնարդյունքները ստուգվում են, ամեն արդյունքի ձեռքբերումը գնահատվում է բավարար, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում գործնական առաջադրանքը։ Հստակ ռուբրիկներ առանձնացված չեն։

Ուսանողների ուսումնառության բաղկացուցիչ մաս է պրակտիկան։ Ուսումնական պլաններում առկա են պրակտիկայի երեք տեսակ՝ ուսումնական, արտադրական և նախաավարտական։ Արտադրական և նախաավարտական պրակտիկաները հիմնականում անցկացվում են ոլորտի գործատուների մոտ։ Պրակտիկաների անցկացման համար լրացվում են օրագրեր, ներկայացվում են հաշվետվություններ։

Ուսանողները գնահատվում են նաև պրակտիկայի ընթացքում։ Օրագրի վերջում ուսանողը հաշվետվություն է լրացնում, որտեղ կիսվում է իր տպավորություններով, դիտողություններով և առաջարկներով։ Պրակտիկայի գնահատումը (10 բալային համակարգով) իրականացնում է պրակտիկայի ղեկավարը ինչպես պրակտիկայի ընթացքում՝ յուրաքանչյուր օրվա վերջում, այնպես էլ պրակտիկայի ավարտին՝ ամփոփ գնահատականով և ուսանողի բնութագրով։ Գնահատականի համար հաշվի են առնվում ուսանողների հաճախումները, տեսական գիտելիքների գործնական կիրառումը, կազմակերպչական ջիղը։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջը ձևավորել է համագործակցության լայն ցանց և հնարավորություններ պրակտիկաների անցկացման համար։ 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է համագործակցող գործատուների թվի համալրում 39%-ով։

Պրակտիկաների դիտարկումից պարզ դարձավ, որ պրակտիկաները հիմնականում անց են կացվում փոքր խմբերով, ինչի միջոցով գործատուներն ուսանողներին ցուցաբերում են անհատական մոտեցում՝ մասնագիտական և կազմակերպչական կոնկրետ գործունեության ընթացքում։ Պրակտիկաների վայրեր այցելությունից պարզ դարձավ, որ պրակտիկայի արդյունքում իրենց լավ դրսևորած ուսանողները ստանում են աշխատանքի առաջարկ։

«Խոհարարական գործ» մասնագիտության կրթական ծրագրի ուսումնական պլանով տրամադրվել է 9 շաբաթ պրակտիկա, որից 3 շաբաթ տնողությամբ ուսումնական պրակտիկան անցկացվում է քոլեջի խոհանոցներում, 4 շաբաթ արտադրական և 2 շաբաթ նախաավարտական պրակտիկաները անցկացվում են արագ սննդի կետերում, խորտկարաններում, ռեստորաններում: Պրակտիկայի օրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ղեկավարը բնութագրում է այն կարողություններն ու հմտությունները, որոնք ուսանողը ձեռք է բերել պրակտիկայի ժամանակ:

Պետական ամփոփիչ ատեստավորումը քոլեջում իրականացվում է համալիր քննությամբ՝ ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական մոդուլներից, «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված ծրագրային ապահովում» կրթական ծրագրով՝ դիպլոմային աշխատանքի պաշտպանությամբ: Ամփոփիչ հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում առկա են և՛ տեսական գիտելիքները, և՛ գործնական հմտությունները ստուգող հարցեր: Նման մոտեցումն ընդունված է բոլոր մասնագիտություններում: Պետական ամփոփիչ ատեստավորումը գնահատվում է ըստ ընդունված կարգի՝ գերազանց, լավ, բավարար որակավորումով՝ դրանք համապատասխանեցնելով գնահատման 20 բալային համակարգին: Գնահատականի բողոքարկման դեպքեր չեն գրանցվել:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից խորհրդատվություն է տրվել՝ Ներդնել գրագողությունը կանխարգելող և ակադեմիական ազնվությունն ապահովող գործուն մեխանիզմներ: Քոլեջը մշակել և ներդրել է «Ակադեմիական ազնվության ապահովման» կարգ, որպես նպատակ սահմանել է ակադեմիական ազնվության վերաբերյալ խնդիրները, պահանջները և պայմանները: Այսուհանդերձ, ուսանողների ինքնուրույն անհատական աշխատանքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ոչ միշտ են դրանցում պահպանված աղբյուրներին կատարված հղումները:

Քոլեջը կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն առայժմ չի իրականացրել, մշտադիտարկման և համեմատական վերլուծության իրականացման հստակ մեխանիզմներ ներդրված չեն: Հարկ է նշել, որ լավ փորձի ուսումնասիրությունն ու ներդրումը կրթական ծրագրերում տեղի է ունենում գործատու դասավանդողների հետ շփումների և վարպետաց դասերի միջոցով: Այսպես օրինակ ՎՁՏՊՔ շրջանավարտի կողմից անցկացվել է վարպետաց դաս՝ ցուցադրելով մի քանի կերակրատեսակների պատրաստումը: Քոլեջի ուսանողներն ու դասախոսները մասնակցել են ոլորտի լավագույն մասնագետների կողմից կազմակերպված վարպետաց դասերին, որտեղ ներկայացվել են մատուցած ծառայությունների տեսակները, հյուրերի հետ շփման էթիկայի կանոնները, համարների տեսակները, գները և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում իրականացվում են բաց-դասեր՝ առկա լավագույն փորձի տարածման նպատակով:

Քոլեջում ՄԿԾ-ների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործող հիմնական մեխանիզմներից են ՈՆԱՀ պատասխանատուի կողմից իրականացվող հարցումները՝ ուսանողների, շրջանավարտների և գործատուների շրջանում: Վերոնշյալ

հարցումների արդյունքները վերլուծվել են միայն քանակական բաղադրիչով։ Օրինակ՝ Գործատուների կողմից կրթական ծրագրերի գնահատման հարցման արդյունքների վերլուծությունում նշված է՝ Կրթական ծրագրերը թույլ են տվել շրջանավարտին ծանոթանալու մասնագիտական ասպարեզի արդի տեխնոլոգիաներին և հաշվենախագծային ծրագրերի կատարմանը, հարցին գործատուները պատասխանել են լիովին համաձայն եմ՝ 38%, համաձայն եմ՝ 52%։ Նշվում է, որ բարելավման խնդիրներ չեն բացահայտվել, գործատուների կողմից, առաջարկներ չեն ներկայացվել։

Դասավանդման մեթոդների վերանայման համար հիմք են հանդիսանում դասալսումները, հարցումները։ Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվում են հարցումներ, հանդիպումներ, փորձի փոխանակման, դասավանդման մեթոդների ընտրության, սկսնակ մասնագետների ուղղորդման նպատակով իրականացվող դասալսումներ։ Դասալսման արդյունքները քննարկվում են, արձանագրվում դասալսումների մատյանում, որտեղ գնահատվում է դասի պլանավորումը, կառուցվածքը, ուսանողին ցուցաբերած անհատական մոտեցումը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը, նախապես պատրաստված ուսումնական նյութերը։ Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ դեռևս այս բոլոր չափանիշներով արդյունավետության գնահատում չի իրականացվում։

ՄԿԾ-ների մշտադիտարկման համար կիրառվում են նաև պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի արձանագրությունները, որտեղ ներկայացվել են հետևյալ առաջարկությունները. «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ԿԾ-ում կատարել ոլորտային փոփոխություններ, «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված ծրագրային ապահովում» մասնագիտական ԿԾ-ում ներրառել նորարարություններ՝ հաշվի առնելով լայնաթափ զարգացումը SS ոլորտում։ Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ քոլեջը դեռևս այդ ուղղությամբ ՄԿԾ-ներում փոփոխություններ չի կատարել։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ներդրել է մարզում պահանջված կրթական ծրագրեր, ինչն առանցքային է տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքներին արձագանքելու համար։ Այս համատեքստում փորձագիտական խումբը կարևորում է ՄԿԾ-ների անհրաժեշտության հիմնավորվածության խորը ուսումնասիրությունը, դրանց տվյալների համադրումը աշխատաշուկայի պահանջների հետ աշխատաշուկայում պահանջված շրջանավարտներ թողարկելու համար։

«Գինեգործություն և հյութերի արտադրություն» դուալ ծրագրի հաջողությունը կարևոր փորձ է, և «Զբոսաշրջության» ոլորտում նմանատիպ դուալ ծրագրի իրականացումը կնպաստի ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը։ Դուալ կրթության ընդլայնումը կնպաստի ուսանողների գործնական հմտությունների կատարելագործմանը, սակայն անհրաժեշտ է այս գործընթացը կանոնավոր ձևով վերահսկել՝ ապահովելու սահմանված վերջնարդյունքները։

Փորձագիտական խումբը գտնում է, որ ՄԿԾ-ներում ընտրովի և նախասիրական առարկաների առկայությունը կարևոր դեր է խաղում ուսանողների ընդհանուր զարգացվածության համար: Առարկաների նպատակային և գիտակցված ընտրությունը կնպաստի ուսանողակենտրոն ուսուցման խորացմանը՝ առավել մոտեցված ուսանողների և աշխատաշուկայի պահանջներին:

Դասավանդման գործընթացում ուսանողակենտրոն մեթոդների կիրառումը կարևոր է ուսանողների անհատական կարիքների և զարգացման ուղղորդման համար: Սակայն ուսումնական բեռնվածության չհամակարգվածությունը կարող է հանգեցնել ուսանողների գերբեռնվածության: Հանձնարարականների քանակի վերահսկումը կնպաստի ուսանողների ինքնուրույն աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում պրակտիկ ոլորտից դասավանդողների կողմից տրվող հանձնարարությունների ավելացումը, ինչը ուսանողներին հնարավորություն է տալիս ծանոթանալու իրական խնդիրներին ու ապահովում նրանց պատրաստվածությունը աշխատաշուկա մուտք գործելուն:

Գնահատման և բողոքարկման համակարգի առկայությունը դրական ազդեցություն ունի գնահատման թափանցիկության վրա: Փորձագիտական խումբը գտնում է, որ գործնական հմտությունների գնահատման մեխանիզմների բարելավումը կնպաստի ուսանողների գործնական կարողությունների ավելի օբյեկտիվ գնահատմանը:

Պրակտիկաների կազմակերպման գործընթացում գործատուների ներգրավվածությունը կարևոր է, սակայն անհրաժեշտ է հետագա զարգացում՝ գնահատման համակարգերի բարելավման ուղղությամբ: Գործնական կարողությունների պարտադիր ներկայացումը (պրակտիկայի արդյունքների պաշտպանությունը) պրակտիկաների ավարտին կարող է խրախուսել ուսանողների մասնագիտական հմտությունների և փորձի զարգացումը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի մոտեցումը փոքր խմբերով պրակտիկաներ կազմակերպելու գործում, ինչը հնարավորություն է տալիս գործատուներին անհատական հետադարձ կապ տրամադրել ուսանողներին և նրանց մոտ ձևավորել գործնական հմտություններ ու կարողություններ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի շարունակաբար վերլուծել հանձնաժողովների հաշվետվությունները, վեր հանել խնդիրները և դրանք դնել կրթական ծրագրերի բարելավման հիմքում:

Ակադեմիական ազնվության պահպանման մեխանիզմների ներդրումը կարևոր քայլ է կրթական միջավայրի բարելավման և թափանցիկության պահպանման համար: Այս մեխանիզմների լիարժեք կիրառումը կնպաստի ուսանողների ինքնուրույն աշխատանքի որակի բարձրացմանը՝ խուսափելով գրագողությունից և խրախուսելով ինքնուրույն մտածողությունը:

Փորձագիտական խմբի գնահատմամբ՝ բենչմարքինգի իրականացումը կնպաստի քոլեջի ՄԿԾ-ների արդյունավետության բարձրացմանը, հնարավորություն կտա բարելավել ծրագրերի որակը և համապատասխանեցնել դրանք լավագույն փորձին: Այս համատեքստում

փորձագիտական խումբը շեշտադրում է փորձի փոխանակմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը, այդ թվում՝ պրակտիկ փորձառությամբ շրջանավարտների կողմից վարպետաց դասերի անցկացումը, ինչը հանգեցնում է մասնագիտական արդի պահանջներին քոլեջի ներկայացուցիչների ծանոթացմանը:

Մշտադիտարկման և վերանայման մեխանիզմների լիարժեք գործարկումն անհրաժեշտ է ծրագրերի շարունակական բարելավման համար: Այս մեխանիզմների արդյունավետ կիրառումը կնպաստի ծրագրերի արդյունավետության վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվության հավաքագրմանը և կրթական ծրագրերի շարունակական զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իրականացնում է տարածաշրջանի զարգացման ուղղություններին համահունչ կրթական ծրագրեր, կրթական ծրագրերի իրականացման արդյունքում քոլեջի շրջանավարտներն աշխատում են համապատասխան ոլորտում, դասախոսներն ուսանողների կրթական կարիքներին համահունչ ընտրում են դասավանդման և ուսումնառության մեթոդները, կիրառվող գնահատման մեթոդները թույլ են տալիս ապահովել համապատասխան արդյունքների ձեռքբերումը, ուսանողների պրակտիկաների շրջանակն ապահովում է ՊԿՉ-ներով նախատեսված ուղղությունները, քոլեջում առկա են կրթական ծրագրերի մշտադիտարկման որոշ մեխանիզմեր՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՁՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Ուսանողների հավաքագրման նպատակով քոլեջի կողմից իրականացվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ՝ բուկլետների տպագրում, տեսանյութերի պատրաստում, այցեր մարզում գտնվող դպրոցներ, որոնց ժամանակ դիմորդներին ներկայացվում են քոլեջի մասնագիտություններն ու շրջանավարտների աշխատանքի հնարավորությունները: Քոլեջի կարիերայի կենտրոնը կազմակերպում է նաև «բաց դռների օրեր», որոնց ժամանակ դիմորդները քոլեջի ռեսուրսներին, հնարավորություններին և մասնագիտություններին: Ուսանողների հավաքագրման նպատակով կիրառվում են նաև քոլեջի կայքէջը և ֆեյսբուքյան էջը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման աշխատանքներում հիմնականում ներգրավված են կարիերայի կենտրոնը և ուսանողները:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դիմորդների թվի դինամիկ աճ է նկատվում հատկապես «Գինեգործություն» մասնագիտության գծով, որը, ըստ քոլեջի ներկայացուցիչների, պայմանավորված է այդ բաժնում դուալ կրթական ծրագրի առկայությամբ: Ըստ քոլեջի ինքնավերլուծության՝ քոլեջում հիմական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 349 ուսանող:

Վերջին 5 տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների հեռացումների հիմական պատճառներ են բնակավայրի փոփոխությունը, բնակավայրերի հեռավորությունը, ապա վարձավճարի և բացակայությունների հետ կապված խնդիրները: Հեռացումների քանակը նվազեցնելու համար քոլեջում իրականացվում են միջոցառումներ, ինպիսիք են, օրինակ, վարձի մաս-մաս վճարում՝ ըստ պայմանագրի, սոցփաթեթով վճարումներ և այլն:

Քոլեջն ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացնում է Ուսանողական խորհրդի, Որակի ներքին ապահովման պատասխանատուների, Կարիերայի կենտրոնի, ղեկավար անձնակազմի և կուրսղեկների միջոցով: Որպես ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմ են դիտարկվում պարբերաբար անցկացվող հարցումները, հանդիպումները տնօրենի, որակի պատասխանատուի և այլ օղակների հետ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը վերհանված կարիքների հիման վրա իրականացրել է լրացուցիչ դասընթացներ, սեմինար-քննարկումներ, խորհրդատվություններ, մեծացրել է ուսանողների ներգրավվածությունը տարածաշրջանում կազմակերպվող միջոցառումներին, ցուցահանդեսներին և այլն:

Ուսանողների կարիքների վերհանման գործընթացում կարևոր օղակ է ՈւԽ-ն: Ուսանողներն իրենց հուզող հարցերով դիմում են ՈւԽ-ին, և ՈւԽ-ն իր գործառույթների շրջանակում փորձում է խնդրին լուծում տալ: Այսպես, օրինակ, ուսանողների կողմից արված վերջին առաջարկը վերաբերել է JavaScript ծրագրին: ՈւԽ-ն հարցը բարձրացրել է Կառավարման խորհրդի նիստում, որից հետո քոլեջը կազմակերպել է JavaScript-ի դասընթացներ:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսանողներն անհրաժեշտության դեպքում ազատորեն դիմում են դասախոսներին՝ խորհրդատվություն ստանալու նպատակով: Քոլեջի կողմից իրականացվում են նաև նախաքննական խորհրդատվություններ, որոնց համար սահմանված է հստակ ժամանակացույց: Ըստ քոլեջի կողմից իրականացված հարցումների՝ ուսանողները կարևորում են խորհրդատվական պարապմունքների իրականացումը, և նրանց 48.6%-ն ընդգրկված է այս պարապմունքներում:

Քոլեջը փորձել է նախկինում ուսանողների համար նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ իրականացնել օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ: Ներկայումս անգլերենի լրացուցիչ պարապմունքներ չեն իրականացվում, սակայն, ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցի ընթացքում, ըստ անհրաժեշտության դասախոսները պատրաստակամ են աջակցելու ուսանողներին, պատասխանելու նրանց հարցերին:

Քոլեջում առկա է նաև վարչական աշխատակազմին դիմելու հստակ ժամանակցույց: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով: Քոլեջը հարցումների միջոցով գնահատել է նաև վարչական անձնակազմից ուսանողների բավարավածությունը, ըստ որի ուսանողների 96.2%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, իսկ 93.6%-ը բավարարված է այդ ծառայություններից: Ուսանողները դիմում են կուրսղեկներին, իրավախորհրդատուին, ուսմասվարին՝ տարկետման իրավունքից օգտվելու, ուսման վարձի զեղչերի, կրթաթոշակ ստանալու, պրակտիկաների վերաբերյալ հարցերով:

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով քոլեջում առկա է կարիերայի կենտրոն: Կարիերայի կենտրոնը պարբերաբար անցկացնում է անհատական և խմբային խորհրդատվություններ, սեմինար-դասընթացներ, հանդիպումներ ուսանողների և հաջողության հասած շրջանավարտների հետ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կարիերայի կենտրոնի հետ համագործակցությամբ բուհում իրենց կրթությունը շարունակող քոլեջի շրջանավարտները կիսում են իրենց փորձը քոլեջի ուսանողների հետ՝ տեղեկացնելով նրանց շարժունության ծրագրերի վերաբերյալ, իսկ իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտները, հատկապես՝ խոհարարները, հաճախ քոլեջում իրականացնում են վարպետաց դասեր ոլորտի նորարարություններին ուսանողներին ծանոթացնելու համար: Կենտրոնը ակտիվ համագործակցում է տարածաշրջանի գործատուների, Միասնական սոցիալական ծառայության և մի շարք այլ պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ:

2021-2024թթ. Քոլեջը կնքել է շուրջ 16 համաձայնագրեր և հուշագրեր հաստատությունների հետ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման շուրջ: Կարիերայի պատասխանատուն պարբերաբար թափուր աշխատատեղերի վերաբերյալ իրազեկում է շրջանավարտներին, այդ թվում՝ քոլեջում առկա թափուր հաստիքների վերաբերյալ: Կարիերայի պատասխանատուն իրականացրել է իր գործունեության արդյունքների վերլուծություն, որտեղ ներկայացվել են վերջին տարիներին ուսանողների զբաղվածության տվյալները, որոնք աշխատանքի են անցել կարերայի պատասխանտուի օժանդակությամբ: Շրջանավարտների հետագծի վերաբերյալ փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ըստ 2022թ.-ի տվյալների 43 շրջանավարտներից 22-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, 21-ը աշխատում են, որից 6-ը իրենց մասնագիտությամբ: Զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն դիրքերում են գտնվում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Զբոսաշրջություն», «Գինեգործություն» և «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագերի շրջանավարտները: Ըստ 2022-2023թթ. տվյալների՝ շրջանավարտների մեծ մասը՝ 31.4%-ը, ուսումը շարունակել է, 10%-ը նախքան ավարտելը աշխատանք է ստացել, 8.5%-ը աշխատում է իր մասնագիտությամբ, իսկ 21.4%-ը՝ ոչ մասնագիտությամբ, գործազուրկ շրջանավարտների թիվը կազմում է 8.5%, իսկ ավարտելուց անմիջապես հետո աշխատանք ստացած

ուսանողների թիվը՝ 12.8%: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պարբերաբար թարմացնում է շրջանավարտների բազան:

Անդրադառնալով քոլեջի ուսանողական խորհրդի գործունեությանը՝ կարելի է նշել, որ իր կողմից նախատեսվող միջոցառումները խորհուրդն ամրագրում է տարեկան աշխատանքային պլաններում՝ նշելով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետները և պատասխանատուներին: ՈւԽ-ն նիստերին քննարկում է ուսանողներին վերաբերող հարցեր, խնդիրներ, պլանավորվում է կազմակերպել նոր դասընթացներ, միջոցառումներ, սեմինար-քննարկումներ, մրցույթներ և այլն: 2023-2024 ուստարում ուսխորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, օրինակ՝ Ուսանողների օրվան, Պարույր Սևակի 100-ամյակին նվիրված միջոցառումներ, ինչպես նաև սպորտային մրցույթներ:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նիստերի ընթացքում ուսանողների իրավունքների խախտման կամ պաշտպանությանն ուղղված հարցեր չեն քննարկվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ Ուսանողական խորհրդի աշխատանքների իրազեկման մասին միջոցառումները ակտիվ ընթացք ունեն:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունները գնահատվում են հիմնականում հարցումների միջոցով: Վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից վերհանված խնդիրները հիմնականում վերաբերում են նոր դասընթացների, խմբակների կազմակերպմանը, որոնց լուծմանը նպաստելու համար քոլեջը կազմակերպում է դասընթացներ, խմբակներ՝ ուսանողների առաջարկած թեմաներով, առարկաներով: Ուսանողների արձագանքները հաշվի առնելով՝ քոլեջում սկսել է գործել անատոմիայի խմբակը: Կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատում քոլեջը չի իրականացրել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում ուսանողների հավաքագրման և ընտրության մեխանիզմները նպաստում են դիմորդների դինամիկ հոսքին և ուսանողների կայուն թվաքանակի ապահովմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ հավաքագրման գործընթացում մեծապես կարևոր է սոցիալական ցանցերի կիրառումը, ինչպես նաև ուսանողների ներգրավումը քոլեջի մասին տեղեկատվության տարածման հարցում, ինչը նպաստում է ապագա դիմորդների մոտ իրենց ուսումնառության վերաբերյալ պատկերացման ձևավորմանը: Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի մոտեցումն ուսանողների կարիքների վերհանման ու դրանց արձագանքելու հարցում, ինչը քոլեջի միջավայրը դարձնում է առավել ուսանողակենտրոն: ՈւԽ ներգրավումը ուսանողների կարիքների բացահայտման գործընթացում նպաստում է ուսանողների կողմից բարելավումների նկատմամբ վստահության մեծացմանը և առավել անկաշկանդ դարձնում խնդիրների բացահայտումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն հանգամանքը, որ քոլեջում առկա է լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվությունների համար նախատեսված

ժամանակացույց և ուսանողների մեծ մասն օգտվում ու բավարարված է այդ խորհրդատվություններից: Փորձագիտական խումբը շեշտադրում է օտար լեզուների դասընթացների ավելացման անհրաժեշտությունը, ինչը կնպաստի ուսանողների լեզվաիմացության բավարար մակարդակի ապահովմանը: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ նախորդ հավատարմագրումից հետո Կարիերայի կենտրոնի ջանքերը նպաստել են նոր կապերի հաստատմանը՝ ընդլայնելով քոլեջում փորձի փոխանակման հնարավորությունները: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը պետք է շարունակի իր ուշադրության կենտրոնում պահել շրջանավարտների հետագիծը՝ դիտարկելու կրթական ծրագրերի արդյունավետությունը և բացահայտելու նաև կրթական ծրագրերի խնդիրները: Դրական հանգամանք է այս գործընթացներում շրջանավարտների ներգրավումը, ինչը ապագա հեռանկարում կարող է նպաստել շրջանավարտների ցանցի ձևավորմանը և քոլեջի զարգացմանը:

Փորձագիտական խումբը, կարևորելով նախորդ հավատարմագրումից ուսանողական ծառայությունների և հնարավորությունների ընդլայնման հանգամանքը, շեշտադրում է դրանց արդյունավետության շարունակական գնահատումը, ինչը կնպաստի դրանց բարելավմանը և քոլեջի ռեսուրսների ուղղորդմանը անհրաժեշտ ուղղություններով:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում առկա են ուսանողների հավաքագրման ու ընդունելության հստակ մեխանիզմներ, ուսանողների կրթական կարիքները վերհանվում են քոլեջի կողմից, ուսանողներին տրամադրվում է լրացուցիչ խորհրդատվական աջակցություն, ինչպես նաև գործում են լրացուցիչ խմբակներ, կարիերայի կենտրոնը տրամադրում է աջակցություն նախապատրաստելու ուսանողներին հետագա կարիերային, Ուսանողական խորհուրդն աջակցում է ուսանողների կարիքների վերհանմանը, քոլեջում գործում են ուսանողներին տրամադրվող ծառայությունների գնահատման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՁՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Քոլեջը նպատակ է սահմանել ներգրավել բարձրակ դասախսական կազմ՝ նրանց տրամադրելով շարունանական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից

ու բարենպաստ աշխատանքային միջավայր, իսկ որպես խնդիրներ են դիտարկվում յուրաքանչյուր ՄԿԾ-ի արդյունավետ իրականացման համար դասախոսական կազմին ներկայացվող պահանջների ու չափանիշների սահմանումը, դասախոսական կազմի պարբերաբար գնահատման մեխանիզմների բարելավումը, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական որակի ապահովումը:

Փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին դասախոսների միջին քանակը 30 է, դասախոսական կազմը և թվաքանակը հիմնականում անփոփոխ են:

2023-2024 ուսումնական տարում Քոլեջում դասավանդող 30 մասնագետներից 4-ը՝ համատեղությամբ են աշխատում: Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջի դասավանդող կազմում ավելացել են պրակտիկ փորձառություն ունեցող գործատու-դասավանդողները: Համաձայն Քոլեջի կողմից ներկայացված տվյալների՝ նշված ուսումնական տարում դասախոսական համակազմում 8 պրակտիկ փորձառությամբ դասախոս է եղել, որից 3-ը՝ համատեղությամբ աշխատողներ: Փաստաթղթերի ուսումնասիրությամբ և փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզվեց, որ դասավանդողներից շատերը միաժամանակ վարչական աշխատանքով են զբաղված քոլեջում: Վարչատնտեսական կամ ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչները, մի քանի բացառությամբ, նաև դասավանդում են:

Քոլեջի դասախոսական համակազմի ընտրությունն իրականացվում է՝ համաձայն Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգով սահմանված պահանջների: 2023 թվականի սեպտեմբերի 8-ին Քոլեջում հաստատվել է «Մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգ»: Դասախոսական կազմի ընտրությունը կատարելիս քոլեջը կարևորում է մասնագիտական որակավորումը, աշխատանքային փորձառությունը, երբ տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն ՀՀ-ում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասավանոդողների համար շեշտադրվում է ոլորտային աշխատանքային փորձառության առկայությունը: Ըստ էության՝ լրացուցիչ պահանջներ, ըստ մասնագիտական կրթական ծրագրերի, դասախոսների համար առանձնացված չեն:

Քոլեջի կայքում «Թափուր աշխատատեղեր» պատուհանում տեղադրվում են դասախոսական կազմի համալրման նպատակով անցկացվող մրցույթների հայտարարությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մանկավարժական թափուր հաստիքների համալրման համար մրցույթներ իրականացվում են, սակայն դրանց առավելապես մեկ թեկնածու է դիմում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տարբեր տարիների Քոլեջի շրջանավարտներ, ստանալով բարձրագույն կրթություն, վերադառնում են Քոլեջ՝ որպես դասավանդողներ. նրանք կազմում են դասախոսական կազմի 10%-ը:

Քոլեջում դասավանդող 30 դասախոսից, այդ թվում՝ համատեղությամբ, 24-ն ունեն բարձրագույն կրթություն, 4-ը՝ միջին մասնագիտական կամ արհեստագործական

(վարպետներ են), ևս 2-ը՝ սովորում են բարձրագույն ուսումական հաստատությունների բարձր կուրսերում: Դասախոսական կազմի համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսների մասնագիտական որակավորումները հիմնականում համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին: Միաժամանակ, փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի գրեթե կեսի ուսումական ծանրաբեռնվածությունը ձևավորվում է 5-ից ավելի առարկաներով, կան դեպքեր, երբ մեկ դասավանդողի կողմից իրականացվող մոդուլների/դասընթացների թիվն անցնում է 10-ից:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ հարկ է նշել, որ Քոլեջի դասախոսական կազմը երիտասարդացման խնդիր ունի: 2021-2022 ուսումական տարում մինչև 35 տարեկան դասախոսների թիվը կազմում է համակազմի 45%-ը, իսկ 2023-2024 ուսումական տարում այն նվազել է՝ 27% է: Նշված ուսումական տարիների տվյալները փաստում են դասախոսական համակարգմի միջին տարիքի բարձրացման մասին: Դեռևս 2021 թվականին Քոլեջում հաստատվել է երիտասարդ դասախոսների մենթորության քաղաքականություն և կարգ, նաև ընթացակարգ: Սակայն Քոլեջի խնդիրը ոչ թե սկսնակների ինտեգրումն ու աղապտացումն է, այլ դասախոսական կազմի կայությունն ապահովելու նպատակով՝ երիտասարդ մասնագետների համար քոլեջի գրավչության ապահովումը: Վերջին տարիներին Քոլեջը կարողացել է ձևավորել պահուստային ցանկ (կադրային ռեզերվ) դասախոսական տարբեր մասնագիտություններով հաստիքների համար:

2023 թվականին հաստատվել է «Վայոց Ձորի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոսական և ուսումաօժանդակ անձակազմերի աշխատողների աշխատանքային գործունեության գնահատման և խրախուսման կարգ»-ը, որն ամբողջական գործածության մեջ դեռ չի դրվել: Քոլեջում առկա է նաև 2024 թվականի փետրվարին հաստատված «Դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման ընթացակարգ»-ը, որը սահմանում է դասախոսի մասնագիտական պատրաստվածության, մանկավարժական որակների գնահատման չափանիշներ:

Դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներից են դասալսումները, ուսանողների կողմից գնահատումները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումների արդյունքները քննարկվում են քոլեջում լավագույն փորձի բացահայտման և տարածման նպատակով: Դասալսումների ոչ դրական արդյունքների դեպքում իրականացվում է զրույց-քննարկում տվյալ դասախոսի հետ, փորձ է արվում կարճ ժամկետում հասնել թերացումների վերացման, շտկման: Փորձագիտական խմբի դիտարկումներով՝ ուսանողների շրջանում դասախոսների գնահատման նպատակով իրականացված հարցումների արդյունքների ամփոփումը հիմք չի դառնում որոշումների կայացման համար:

Քոլեջի բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը լրացուցիչ ֆինանսական միջոցներ չի հատկացնում դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար: Քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված վերապատրաստումներին: 2022-2024թթ. Քոլեջի 20-ից

ավելի աշխատակիցներ մասնակցել են նաև «Կարողություններին միտված ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման արդյունավետության բարձրացում», «Վայոց ձորի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի սահմանամերձ համայնքների դիմակայության ամրապնդում», «Ռիսկերի կառավարում զբոսաշրջության ոլորտում», «Աղետների և ռիսկերի կառավարում», «Աշխատանքի վրա հիմված ուսուցման լատվիական մոդելի ուսումնասիրություն», «Հայաստանի մարզաբնակ երիտասարդների զբաղվածության և տնտեսական հնարավորությունների բացահայտում» և այլ թեմաներով վերապատրաստումների: Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջում ավելացել են գործատուների մասնակցությամբ իրականացվող փորձի փոխանակման միջոցառումները: Այսպես, օրինակ, Խոհարարական գործ մասնագիտության շրջանակներում իրականացվել են վարպետաց դասեր քոլեջի թե ուսանողների, թե դասախոսների համար, ինչը մասնագիտական զարգացման և նորարարություններին ծանոթանալու հնարավորություն է ստեղծել ներքին շահակիցների համար:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը փորձում է ապահովել դասախոսական կազմի առաջընթացը՝ խրախուսման տարբեր եղանակներով: Օրինակ, վարչական և դասախոսական աշխատանքները համատեղելու հնարավորությունը, ըստ Քոլեջի տնօրինության, ոչ միայն սոցիալական խնդիր է լուծում, այլև հնարավորություն է ստեղծում աշխատանքային առաջխաղացման համար: Ինչպես նաև համեմատաբար փոքրաթիվ ուսանողական համակազմ ունեցող ուսումնական հաստատությունում համեմատաբար փոքրաթիվ աշխատակազմը հնարավոր է դարձնում բոլոր աշխատակիցների անմիջական ընդգրկումն ու ներգրավվածությունը կարիքների վերհանման գործընթացներին: Խրախուսման եղանակ է նաև տարեկան ֆինանսական խնայողությունների հաշվին պարգևավճարների տրամադրումը:

Ուսումնաօժանդակ անձնակազմի գործառույթները սահմանվում են պաշտոնների նկարագրերով: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Քոլեջի վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմը ձևավորվում է հիմնականում Քոլեջի դասախոսներից՝ առաջխաղացման տրամաբանությամբ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը, հիմք ընդունելով նախորդ հավատարմագրման խորհրդատվությունները, քայլեր է ձեռնարկել դասախոսական կազմի՝ պրակտիկ ոլորտի մասնագետներով համալրման, գնահատման գործընթացների բարելավման ուղղությամբ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի դասախոսական կազմը համալրվել է գործատու դասավանդողներով, ինչը հաստատությանը հնարավորություն է տալիս ոլորտային նորարությունները, գործատուների պրակտիկան բերել քոլեջ և նպաստել ուսանողների գործնական կարողությունների ձևավորմանը: Գործարար ոլորտի պրակտիկ մասնագետների ներգրավումը ուսանողներին հնարավորություն է տալիս ստանալ մասնագիտական այնպիսի հմտություններ, որոնց պահանջը թելադրում է անմիջապես աշխատաշուկան:

Դիտարկելով մեկ դասախոսի կողմից դասավանդվող դասընթացների քանակը՝ փորձագիտական խումբը նշում է, որ այս հանգամանքը քոլեջը պետք է պահի ուշադրության կենտրոնում, քննարկի այս մոտեցման արդյունավետությունը: Թեև հաշվի առնելով տարածաշրջանային առանձնահատկություններով պայմանավորված (քոլեջի՝ մարզի միակ մասնագիտական ուսումական հաստատություն լինելու հանգամանքը) դասախոսների պակասի հանգամանքը, դիտարկվող տարիների ընթացքում քոլեջի դասախոսական կազմի համեմատաբար կայուն լինելու հանգամանքը, դասախոսական կազմի ոչ մեծ շարժը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ կրթական ծրագրերի շարունականության իրականացման ռիսկեր քոլեջում ներկայումս չկան: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը պետք է շարունակի իրականացնել կայուն սերնդափոխությունն ապահովելուն ուղղված քայլերը, շրջանավարտներին և երիտասարդ այլ կադրերին ներգրավի դասվանդման գործընթացում՝ միևնույն ժամանակ ուշադրություն դարձնելով փորձառու դասախոսների փորձի փոխանցմանը և մասնագիտական աջակցության տրամադրմանը սկսնակ դասախոսներին: Այս մոտեցումը կնպաստի կադրերի երիտասարդացմանը և կրթական ծրագրերի շարունակական իրականացմանը:

Փորձագիտական խմբի համար գնահատելի է մոտիվացված դասախոսական կազմի առկայությունը և քոլեջի ղեկավարության կողմից խրախուսման կարևորության գիտակցումը, ինչի արդյունքում նվազում է դասախոսական կազմի հոսունությունը:

Փորձագիտական խումբը կարևորում է վարչական, ուսումնաօժանդակ կազմեր ձևավորելու պարագայում մրցութային կարգի կիրառման անհրաժեշտությունը, ինչը կնպաստի քոլեջի նպատակների իրականացման համար անհրաժեշտ կադրեր ներգրավելուն:

Դրական է, որ քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվող և այլ վերապատրաստումների: Դասախոսական կազմի մասնագիտական շարունակական զարգացման և ըստ մասնագիտությունների ոլորտային փորձի փոխանակման նպատակով՝ փորձագիտական խումբը մատնանշում է համագործակցության ձևավորման անհրաժեշտությունն այլ միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական հաստատությունների հետ, ինչը ֆինանսական սուղ պայմանների պարագայում հնարավորություն կտա ապահովել դասախոսական կազմի մասնագիտական զարգացումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ դասախոսական անձնակազմի գնահատման, կարիքների վերհանման համար քոլեջում գործում են մի շարք մեխանիզմներ, որոնց արդյունքում բացահայտվել են մեթոդական խնդիրները և քայլեր ձեռնարկվել դրանք լուծելու ուղղությամբ: Այսուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսական կազմի գնահատման նպատակով իրականացվող հարցումները լրամշակման կարիք ունեն: Մասնագիտական կարիքների վերհանման և գնահատման մեխանիզմների ներդնումը թույլ կտա քոլեջին բացահայտել մասնագիտական զարգացման ուղղությունները և առկա համագործակցություններն ու ռեսուրսներն ուղղել դասախոսական կազմի մասնագիտական զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իր կրթական ծրագրերի իրականացման համար ունի համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, նախորդ հավատարմագրումից հետո քոլեջի դասախոսական կազմը համալրվել է պրակտիկ ոլորտից գործատու դասախոսներով, դասախոսական կազմի համալրվածությունը և կայունությունը չի վտանգում կրթական ծրագրերի իրականացումը, առկա են դասախոսական կազմի գնահատման և խրախուսման որոշ մեխանիզմներ, քոլեջը համագործակցությունների միջոցով փորձում է հնարավորություններ ստեղծել դասախոսական կազմի մասնագիտական զարգացման համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՁՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

ՎՁՊՔ-ի հետազոտական գործունեության հավակնությունները սահմանված են 2021-2026թթ. ռազմավարական ծրագրում: Քոլեջը նպատակ է դրել խրախուսել դասախոսական կազմի ակտիվ ներգրավումը հետազոտական աշխատանքներում՝ մեծացնելով քոլեջի գիտական ներուժի ներդրումը տարածաշրջանի տնտեսական զարգացման և ազգաբնակչության բարեկեցության բարձրացման գործում: Նշված նպատակին հասնելու համար Քոլեջը առանձնացրել է հետևյալ խնդիրները.

- Հետազոտական նախագծերում և ծրագրերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար նպաստող մեխանիզմների և նախադրյալների ստեղծում:
- Ծառայությունների տրամադրում դասախոսներին և ուսանողներին հետազոտական ծրագրերում ընդգրկվելու համար:

Նշված խնդիրների համար նախատեսել է ապահովել դասախոսների և ուսանողների մասնակցությունը հանրապետական և միջքոլեջային գիտահետազոտական նստաշրջաններին, կոնֆերանսներին, սեմինարներին, իրականացնել որակավորման բարձրացման դասընթացներ, ընդլայնել տեղեկատվական և ուսուցողական օժանդակությունը դասախոսներին և ուսանողներին հետազոտական ծրագրերում ընդգրկվելու համար: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նշված գործընթացների իրականացման համար մարդկային և ֆինանսական ռեսուրսներ պլանավորված չեն,

հստակեցված չեն դրանցից ակնկալվող արդյունքները: Որպես արդյունք քոլեջի կողմից առանձնացվել է հետազոտական նախագծերում ընդգրկվածների, կոնֆերանսների թվի աճ, սակայն չի հստակեցվել, թե որ ցուցանիշի ձեռքբերումը քոլեջը կհամարի բավարար նշված ժամանակահատվածի համար:

Նախորդ հավարարմագրման արդյունքում քոլեջը խորհրդատվություն է ստացել ներգրավել բյուջետային և արտաբյուջետային ֆինանսական նոր միջոցներ հետազոտական և գործնական աշխատանքների իրականացման համար (այդ թվում՝ գործատուների հնարավորությունների կիրառմամբ): Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական հանդիպումներից պարզվեց, որ Քոլեջն այս ուղղությամբ քայլեր դեռևս չի իրականացրել:

Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից և մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջում ուսանողների հետազոտական կարողությունների զարգացման նպատակով կրթական ծրագրերում ներառվել են կուրսային և դիպլոմային աշխատանքների կատարման հանձնարարականներ: Օրինակ՝ «Զբոսաշրջություն» մասնագիտության կրթական ծրագրում ներառվել է մեկ կուրսային աշխատանքի պաշտպանություն «Զբոսաշրջային փաթեթի մշակում և փորձարկում», «Զբոսաշրջային փաթեթի խթանում և իրացում» մոդուլներից: «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության կրթական ծրագրով նախատեսված է 7 շաբաթ տևողությամբ նախադիպլոմային պրակտիկա, որն ավարտվում է դիպլոմային աշխատանքի պաշտպանությամբ: Քոլեջի կրթական ծրագրերում արտացոլված չեն անհատական գործնական աշխատանքների/առաջադրանքների հաստատված ցանկերը: Պրակտիկաների դիտարկումը ցույց տվեց, որ պրակտիկայի վայրերում ուսանողները ևս ստանում են հետազոտական բաղադրիչ ունեցող հանձնարարականներ, ինչպես օրինակ տուր փաթեթների մշակման, երթուղիների կազմման, շուկայի վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման, ճաշատեսակների բաղադրատոմսերի ուսումնասիրման ու լրամշակման առաջադրանքներ: Այսուհանդերձ, դրանք դեռևս ամբողջովին համակարգված չեն քոլեջի կողմից, տեղի են ունենում դասախոսների անհատական նախաձեռնությամբ, ինչպես նաև տեսանելի չէ կապը տրամադրվող հանձնարարականի և սահմանված կրթական վերջնարդյունքների միջև:

Ուսանողների շրջանում կատարված անհատական, թիմային աշխատանքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք ընդհանուր առմամբ տեղեկատվություններ պարունակող փաթեթներ են, որոնք ստեղծագործ միտք ձևավորող չեն, առկա չեն ուսանողների սեփական դիրքորոշումները եզրահանգումների տեսքով:

Փորձագիտական հանդիպումները և այցի ընթացքում տեղի ունեցած մասնագիտական քննարկումները ցույց տվեցին, որ քոլեջի կողմից որևէ քաղաքականությամբ առկա չէ, թե քոլեջը ինչպես է պատկերացնում Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակում ուսանողների հետազոտական-վերլուծական գործունեության իրականացումը իր կողմից իրականացվող կրթական ծրագրերի շրջանակում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ

դասախոսները և ուսանողները ևս տարբեր ու երբեմն հակասական պատկերացումներ ունեն հետազոտության իրականացման վերաբերյալ:

Նախորդ հավարարմագրման արդյունքում քոլեջը խորհրդատվություն է ստացել մշակելու և ներդնելու դասախոսների հետազոտական գործունեության խթանման և խրախուսման մեխանիզմներ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսներն իրենց մասնագիտական գործունեության արդյունքում չունեն մշակված ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցներ: Քոլեջում դասախոսական կազմի հետազոտական գործունեության իրականացման ընթացակարգեր սահմանված չեն, դասախոսական կազմին հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար մեխանիզմները բացակայում են:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը 2021-2026թթ. ՌԾ-ում արտահայտել է իր հետազոտական նպատակները, որոնց իրականացման համար առանձնացվել են խնդիրներ, գործողություններ, արդյունքներ, այնուամենայնիվ սահմանված արդյունքների ոչ իրատեսական լինելը հնարավորություն չի ընձեռում իրականացնել առաջընթացի գնահատում: Հստակ վերջնարդյունքների սահմանումը, քոլեջի կողմից հետազոտության բնութագրումը իր կրթական ծրագրերի իրականացման շրջանակում թույլ կտա առավել տեսանելի դարձնել Քոլեջի գրանցած առաջընթացը հետազոտության ոլորտում: Հետազոտությանն ուղղված ֆինանսական միջոցների դիտարկմամբ փորձագիտական խումբը նշում է, որ դրանց բացակայությունը կարող է ռիսկային դարձնել այս ոլորտում քոլեջի կատարողականի ապահովումը:

Դրական է, որ Քոլեջը փորձել է մասնագիտական կրթական ծրագրերում ներառել հետազոտական բաղադրիչ պարունակող տարրեր: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում դեռևս ցածր է:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության առանձնահատկությունները հաշվի առնելով՝ քոլեջի կողմից հետազոտական ոլորտի խնդիրների սահմանումը հնարավորություն կտա հետազոտական գործունեությունը դարձնել ավելի պլանավորված: Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև, որ հետազոտական բաղադրիչ պարունակող առաջադրանքների արտացոլումը կրթական ծրագրերում և ուսանողների ավելի լայն շրջանակի ներգրավումը անհատական ու խմբային վերլուծական-ստեղծագործական աշխատանքներում կնպաստեն քննադատական մտածողություն ունեցող շրջանավարտների պատրաստմանը:

Հետազոտական գործունեության խթանման համատեքստում կարևոր է նաև ըստ կրթական ծրագրերի՝ հետազոտական ուղղության հստակեցումը, դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմների կիրառումը, ինչը կնպաստի նրանց մասնագիտական զարգացմանը, մանկավարժական և մասնագիտական աշխատանքի ուսումնասիրմանը: Դասախոսների և ուսանողների ներգրավմամբ հետազոտական աշխատանքների իրականացումը (դրանք կարող են ընդգրկել տարածաշրջանի գործատուների կարիքների,

պատմամշակութային վայրերի, շուկայի առանձնահատկությունների ուսումնասիրությունը) և դրանց արդյունքների հանրայնացումը կբարձրացնեն քոլեջի հեղինակությունը և կստեղծեն նորարարական փորձի տարածման հնարավորություններ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջի կողմից իրականացված գործընթացները չեն հանգեցրել հետազոտության ուղղությամբ քոլեջի ռազմավարական ծրագրով նախատեսված նպատակների իրականացմանը, կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչն ամբողջապես ներդրված չէ, չեն գործում դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման և ուսումնառության գործընթացում հետազոտական արդյունքների ներդրման հստակ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՁՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջն իր գործունեությունը ծավալում է Եղեգնաձորում գտնվող երկու մասնաշենքում՝ ուսումնական (950ք.մ.) և լաբորատոր (523.3ք.մ.): Հիմնական՝ ուսումնական մասնաշենքում են տեղակայված վարչական աշխատասենյակները, լսարանները, այդ թվում՝ մի քանիսը համակարգչային և տեսալսողական տեխնիկայով հագեցած, լաբորատորիաները: Քոլեջը համակարգչային և տեսալսողական տեխնիկա ձեռք է բերել բացառապես միջազգային համագործակցային ծրագրերի հաշվին՝ պայմանավորված ուսումնական հաստատության բյուջեի սղությամբ:

Հիմնական մասնաշենքում է խոհանոցային լաբորատորիան, որը հագեցած է մասնագիտական անհրաժեշտ տեխնիկայով, գույքով և սարքավորումներով: Նկուղային հարկում գործում է գինու արտադրության լոբորատորիան, որը հագեցած է համապատասխան սարքավորումներով և հնարավորություն է տալիս ուսանողներին տեղում գործնականորեն ծանոթանալ և մասնակից դառնալ գինու արտադրության ողջ տեխնոլոգիական ընթացքին: Շենքի նկուղային հարկում է նաև գործող փայտամշակման արհեստանոց-լաբորատորիան, որտեղ առկա են հաստոցներ, սարքեր և սարքավորումներ փայտամշակման աշխատանքներ իրականացնելու համար: Քոլեջի բակում տեղադրված է ակվապոնիկ ջերմոց, որն այս ընթացքում չի օգտագործվում: Փորձագիտական այցի ընթացքում իրականացված

ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ բնագիտական լաբորատորիաները (ֆիզիկայի, քիմիայի) կարիք ունեն վերանորոգման և վերազինման:

Քոլեջի հիմնական մասնաշենքում են գտնվում «Արմաթ» ինժեներական լաբորատորիան, Քաղաքացիական կրթության կենտրոնը: Շենքի այս տարածքները գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ գործունեության պայմանագրի հիմքով են օգտագործվում: Ուսանողների կողմից դրանք օգտագործվում են թե՛ ընթացիկ դասերի, թե՛ այլ հանդիպումների, մասնագիտական դասընթացների համար: Քաղաքացիական կրթության կենտրոնում է մասամբ տեղակայված քոլեջի գրադարանը. այստեղ առկա է մասնագիտական գրականություն:

Քոլեջի լաբորատոր մասնաշենքում է կարի արհեստանոցը, որը հագեցած է համապատասխան սարքավորումներով (կարի մեքենաներ, այլ մասնագիտական սարքեր, գույք և այլն): Այստեղ է տեղավորված նաև ուսումնական սարքավորումներով հագեցած տրանսպորտային տեխնիկական միջոցների ուսուցման լաբորատորիան, որը սակայն չի օգտագործվում՝ համապատասխան կրթական ծրագրով ուսանողների բացակայության պատճառով: Լաբորատոր մասնաշենքում է գտնվում գրադարանի մյուս հատվածը, միջոցառումների դահլիճը, որոնք վերանորոգման կարիք ունեն:

Փորձագիտական խմբի դիտարկումներով՝ գրադարանի գործունեությունը սահմանափակվում է փոքր թվով բաժանորդների սպասարկմամբ: Գրադարանում առկա գրականությունը հիմնականում ուսումնամեթոդական է՝ մոտ 1300 միավոր, առկա է 364 միավոր գեղարվեստական գրականություն, ինչպես նաև անհրաժեշտ քանակի հանրակրթական դասագրքեր: Հիմնականում գրադարանը համակարգում է դպրոցական դասագրքերի բաշխման աշխատանքը, այդ թվում՝ էլեկտրոնային գրադարանի կիրառմամբ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողներն անհրաժեշտության դեպքում օգտվում են Եղեգնաձորի մարզային գրադարանի ծառայություններից, հատկապես՝ գեղարվեստական գրականության հարցում:

Ռեսուրսների դիտարկման արդյունքում պարզվեց, որ քոլեջի լսարանային ֆոնդը բավականին փոքր է: Քոլեջի կողմից սա նույնպես որպես խնդիր է դիտարկվում, սակայն կարողանում է դասացուցակի ճիշտ կազմակերպման շնորհիվ արդյունավետ օգտագործել ռեսուրսը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում փորձ է արվել ուսումնական գործընթացը երկու հերթով կազմակերպել, սակայն մարզի այլ բնակավայրերից եկող ուսանողների համար տրանսպորտային խնդիրներ են առաջացել. որոշվել է աշխատել մեկ հերթով՝ օգտագործելով լաբորատոր մասնաշենքում առկա լսարանները:

Միևնույն ժամանակ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնական պարապմունքների, պրակտիկաների իրականացման համար քոլեջն օգտագործում է նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները: Օրինակ՝ Գինեգործություն (դուալ ծրագիր է), Խոհարարական գործ, Զբոսաշրջություն և այլ կրթական ծրագրերի գործնական պարապմունքների և պրակտիկաների իրականացման ժամանակ, կազմակերպությունների

միջև փոխադարձ համաձայնությամբ, ուսանողները գործընկեր կազմակերպությունների տարածքում են անցկացնում իրենց պարապմունքները:

Քոլեջը չունի սեփական սպորտային դահլիճ և ֆիզիկական կուլտուրայի դասերն անցկացնելու համար պայմանագրային հիմունքներով օգտվում է Եղեգնաձոր համայնքի մարզադպրոցի հնարավորություններից:

Քոլեջը չունի բուժկետ և բուժաշխատող: Հարկ եղած դեպքում նախատեսվում է սեփական ուժերով առաջին բուժօգնություն ցուցաբերել և տեղափոխել ոչ հեռու գտնվող Եղեգնաձորի բժշկական կենտրոն:

Քոլեջի բյուջեն ձևավորվում է բյուջետային և արտաբյուջետային մուտքերից: Այսպես, 2021 թվականին պետական ֆինանսավորման մուտքերի բաժինն ամբողջ բյուջեի նկատմամբ կազմել է 95.85%, 2022թ.-ին՝ 92.36%, 2023թ.-ին՝ 94.40%: Արտաբյուջետային մուտքերը, որոնք Քոլեջում ձևավորվել են ուսանողների վարձավճարներից, դրամաշնորհներից, իրականացված վճարովի դասընթացներից, նշված տարիներին կազմել են համապատասխանաբար՝ 4.15%, 7.64%, 5.60%: Ընդ որում, եթե 2021թ.-ին վճարովի դասընթացներից ստացված եկամուտի բաժինը եղել է 0.41%, ապա 2022-ին՝ 0.64%, իսկ 2023-ին՝0.89%, այսինքն՝ տոկոսային արտահայտմամբ աճել է կրկնակի: Դրամաշնորհային մուտք, ըստ նախահաշվի, ներկայացված է 2022 թվականի բյուջեում, այն կազմում է ֆինանսական տարվա արտաբյուջետային մուտքերի 0.70%-ը: Ուսանողների վարձավճարների բաժինն ամբողջ բյուջեի նկատմամբ կազմել 2021-ին՝ 3.74%, 2022-ին՝ 6.30%, 2023-ին՝ 4.80%:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկ չի իրականացրել: Հաշվի առնելով մարզի սոցիալ-տնտեսական ցուցանիշները, բնակչության սոցիալական խնդիրները՝ Քոլեջում քննակվել է ուսման վարձի փոփոխության հարցը, սակայն որոշում է կայացվել այն չփոփոխել՝ պահպանելով գործող դրամաչափը՝ 120.000 ՀՀ դրամ:

Ծախսային մասով հարկ է արձանագրել, որ ամբողջ բյուջեի նկատմամբ աշխատավարձի ֆոնդը 2021-ին կազմել է 81.99%, 2022-ին՝ 81.17%, 2023-ին՝ 83.32%: Այլ ծախսերի տեսակները՝ վճարումներ պետական բյուջե, կրթաթոշակ, ուսման վարձերի զեղչեր գործուղման և ներկայացուցչական ծախսեր, իրականացվել են սահմանված կարգով և էականորոն չեն փոփոխվել: Նվազել են տնտեսական ծախսերը (2021-ին՝ 6.18%, 2023-ին՝ 4.01%), հատկապես՝ կոմունալ (էլ. էներգիա, գազ, ջեռուցում, ջրմուղ, հեռախոսակապ և այլն) ծառայությունների մասով (2021-ին՝ 2.83%, 2023-ին՝ 1.76%): Թեպետ Քոլեջն այս հարցով հատուկ վերլուծություն չի իրականացրել, սակայն քոլեջի բյուջեի և իրականացված ծախսերի համեմատական վերլուծությունից պարզ դարձավ, որ երկու տարի առաջ համայնքային զարգացման ծրագրի շրջանակում տեղադրված արևային կայանները թույլ են տվել զգալի նվազացնել հաստատության կոմունալ ծախսերը:

Ֆինանսական փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Քոլեջի բյուջեով նշված ժամանակահատվածի համար զարգացման ծախսեր չեն նախատեսվել, ինչպես և չեն նախատեսվել ծախսեր գրադարանի, դասախոսների մասնագիտական զարգացման,

ուսումնական սարքավորումների և գույքի ձեռքբերման, պրակտիկաների կազմակերպման նպատակով: Վերջինի վերաբերյալ փորձագիտական խումբը հարկ է համարում նշել, որ պրակտիկաների կազմակերպումը Քոլեջին հաջողվում է իրականացնել առանց հատուկ ֆինանսական ծախսերի՝ տարածաշրջանում գործող, հատկապես՝ մասնավոր հատվածի հետ սոցիալական համագործակցության շրջանակում:

Քոլեջը պաշտոնական արտաքին փաստաթղթաշրջանառությունն իրականացնում է Mulberry համակարգով: Ներքին փաստաթղթաշրջանառությունն աշխատակիցների միջև ապահովվում է էլեկտրոնային փաստերի միջոցով կամ թղթային տարբերակով:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ Քոլեջի մուտքը կահավորված է թեքահարթակով, թեև հատուկ կարիքներ ունեցող ուսանողներ Քոլեջում չեն սովորում: Նախատեսվում է, որ եթե լինեն նման ուսանողներ, ապա ուսումնական գործընթացը պետք է հնարավորինս կազմակերպվի շենքի առաջին հարկում: Շենքի մուտքի մոտ կա պահակակետ, որտեղ իրենց ծառայությունն են իրականացնում հերթապահ պահակները: Անվտանգության ապահովման նկատառումներով՝ միջանցքներում տեղադրված են տեսանկարահանող սարքեր: Քոլեջի շենքն ունի ջեռուցման համակարգ, որոշ սենյակներում առկա են հովացման սարքավորումներ: Ռեսուրսների դիտարկման արդյունքում փորձագիտական խումբն արձանագրեց, որ Քոլեջն ունի հակահրդեհային համակարգ, հարկերում տեղադրված են կրակմարիչներ, փակցված են տարհանման պլաններ: Լաբորատորիաների պատերին փակցված են աշխատանքի անվտանգության կանոնները, բացառությամբ՝ խոհանոցի: Մասնագիտական քննարկումների ընթացքում պարզվեց, որ անվտանգության կանոններին ուսանողները ծանոթանում են ՊԿՉ-ով նախատեսված «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլի շրջանակում: Այսուհանդերձ, դասալսումներից, պրակտիկաների դիտարկումներից պարզ դարձավ, որ Խոհարարական գործ մասնագիտության ուսանողները չունեն ամբողջական պատկերացում անվտանգության կանոնների, դրանց պահպանման վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ նկուղային/կիսանկուղային հարկն օգտագործվում է ուսումնական գործընթացի համար, Քոլեջն, անհրաժեշտության դեպքում, այն դիտարկում է նաև որպես ապաստարան: Ռեսուրսների դիտարկման ընթացքում պարզ դարձավ, որ երկրորդ մասնաշենքն առանձին ապաստարան չունի, սակայն հաստատությունը տեղեկացված է իր համար նախատեսված մոտակա ապաստարանի մասին: Քոլեջի քաղաքացիական պաշտպանության շտաբը պարբերաբար իրականացնում է համապատասխան միջոցառումներ:

Քոլեջի որակի ապահովման ստորաբաժանումը պարբերաբար հարցումներ է իրականացնում դասախոսների և ուսանողների շրջանում՝ ռեսուրսներից բավարարվածությունը ճշտելու համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ճկուն մոտեցումներն ու կարողությունն իր սահմանափակ ռեսուրսներով իրականացնել կրթական

գործընթաց՝ պատրաստելով մարզի աշխատաշուկայի կարիքները բավարարող մասնագետներ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ որոշ մասնագիտությունների համար տարիներ առաջ ձևավորված ռեսուրսները՝ նյութատեխնիկական բազան, Քոլեջը կարողացել է պահպանել և զարգացնել: Դա հնարավորություն է տվել Քոլեջին տարիներ անց կրկին վերաբացել, օրինակ, Կարի արտադրության տեխնոլոգիա բաժինը: Լաբորատորիաների վերազինման, լսարանային ֆոնդի և այլ ենթակառուցվածքների վերանորոգման ու կահավորման խնդիրների լուծումը կնպաստի ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը և ուսանողների մասնագիտական հմտությունների զարգացմանը՝ ապահովելով նրանց աշխատաշուկայում պահանջված հմտություններով: Սա հատկապես կարևոր է, որպեսզի Քոլեջը շարունակի պատրաստել մրցունակ մասնագետներ՝ ժամանակակից պահանջներին համապատասխան:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջը կարողացել է ռեսուրսների համալրում իրականացնել արտաքին շահակիցների մասնակցությամբ, սակայն այլընտրանքային ֆինանսական ռեսուրսների ներգրավումը նոր հնարավորություններ կտա՝ նորարար ծրագրեր իրականացնելու համար: Դրական հանգամանք է այն, որ թեև Քոլեջի բյուջեն իսկապես սահմանափակ է և հաստատությունը չունի ըստ կրթական ծրագրերի ֆինանսական կառավարման մոտեցում, նկատելի է, որ բոլոր կրթական ծրագրերին հավասարաչափ ուշադրություն է դարձվում:

Գրադարանի գործունեության բարելավումը և ուսանողների շրջանում գրքերից ու էլեկտրոնային գրադարաններից օգտվելու մշակույթի ձևավորումը կնպաստի ուսումնական նյութերի ավելի լայն հասանելիությանը և ուսումնառության արդյունավետությանը: Էլեկտրոնային գրադարանների հասանելիության ապահովումը, գրադարանային ցանցերին քոլեջի բաժանորդագրությունը ուսանողներին և դասախոսներին հնարավորություն կտա օգտվել բազմազան տեղեկատվական աղբյուրներից և ժամանակակից ռեսուրսներից:

Քոլեջի բյուջեի 80%-ից ավելը աշխատավարձերին հատկացնելը, առանց զարգացման ծրագրերի ֆինանսավորման, երկարաժամկետ հեռանկարում կարող է հանգեցնել կրթական ծրագրերի արդյունավետության անկմանը և ուսումնական հաստատության կայուն զարգացման խոչընդոտմանը: Բյուջեի բաշխման քաղաքականության վերանայումը և այլընտրանքային ֆինանսական ռեսուրսների ներգրավումը կնպաստի կրթական ծրագրերի արդիականացմանը և ռազմավարական նպատակների իրականացմանը, ինչը կապահովի Քոլեջի կայուն և շարունակական զարգացումը:

Քոլեջն իր ներքին և արտաքին փաստաթղթաշրջանառությունը կազմակերպվում է կանոնավոր՝ օգտագործելով նաև էլեկտրոնային հաղորդակցության միջոցներ, ինչը նպաստում է գործավարության արդյունավետությանը:

Դրական է, որ Քոլեջում առկա է անվտանգ միջավայր ուսանողների և աշխատակիցների համար, ինչը հնարավորություն է տալիս կանոնավոր իրականացնել կրթական գործընթացը: Կրթական ծրագրերի շրջանակում գործնական պարապմունքների

իրականացման համատեքստում փորձագիտական խումբը շեշտադրում է անվտանգության կանոններին ուսանողների իմացությունը նրանց անվտանգ կենսագործունեությունն ապահովելու համար:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ Քոլեջն ունի ռեսուրսների գնահատման մեխանիզմեր, որոնք քոլեջին հնարավորություն են տալիս բացահայտել ռեսուրսների վերաձևման կարիքները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իր կրթական ծրագրերի իրականացման համար ունի համապատասխան ուսումնական միջավայր, կիրառում է նաև գործատուների հետ համատեղ ռեսուրսները գործնական պարապմունքների ու պրակտիկաների իրականացման համար, փորձում է տրամադրել ֆինանսական ռեսուրսներ ընթացիկ համալրման համար, առկա է փաստաթղթավորման գործընթացների իրականացման քաղաքականություն, ներդրված են անվտանգության ապահովման որոշ մեխանիզմեր, քոլեջն ունի ռեսուրսների արդյունավետության գնահատման մեխանիզմեր՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՁՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Քոլեջում գործում է հաշվետվողականության ներքևից վերև համակարգ: Քոլեջի ստորաբաժանումները տարեկան կտրվածքով ներկայացնում են իրենց գործունեության մասին հաշվետվությունը կազմակերպական կառուցվածքով սահմանված վերադասին: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հաշվետվությունները հիմնականում ունեն նկարագրողական բնույթ:

ՎՁՏՊՔ խորհրդի հերթական նիստից առաջ ամբիոններում քննարկվում են արված աշխատանքները, վերհանվում են խնդիրները, որոնք համակարգվում են և ներկայացվում ուսումնամեթոդական խորհրդի քննարկմանը, որից հետո խնդիրները և կազմված հաշվետվությունները քննարկվում են Տնօրինական կամ Կառավարման խորհուրդներում՝ պայմանավորված խորհուրդների իրավասություններով և գործառույթներով: ՎՁՏՊՔ-ում առկա համակարգը ապահովում է ոչ միայն ներքին հաշվետվողականություն, այլև ՎՁՏՊՔ հաշվետվողականությունը պետության և հասարակության առջև: Բոլոր

ստորաբաժանումների կատարած աշխատանքների վերաբերյալ հավաքական տեղեկատվության և արդյունքների հավաքագրման հիման վրա յուրաքանչյուր տարի տնօրենի կողմից կազմվում և կառավարման խորհրդին է ներկայացվում հաշվետվություն՝ տարեկան գործունեության և ռազմավարական ծրագրի կատարողականի վերաբերյալ, որը քոլեջի գործունեության մասին հիմնական հաշվետու փաստաթուղթն է:

Քոլեջն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը՝ որպես տեղեկատվական հարթակներ օգտագործելով կայքէջը, ֆեյսբուքյան հարթակը, էլեկտրոնային փոստը, որոնք հնարավորություն են տալիս հասարակությանը տեղեկանալու քոլեջում գործող մասնագիտությունների, ուսումնական գործընթացի, շարունակական կրթության, իրականացվող միջոցառումների մասին: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ներկայումս կայքէջի պատասխանատուն ուսանողական խորհրդի նախագահն է: Քոլեջի գործունեության հանրայնացման պատասխանատվությունը քոլեջի հատուկ նշանակված աշխատակցի գործառույթների մաս չի կազմում: Քոլեջը վարում է իր սոցիալական էջերը դասախոսների և հատկապես ուսնառողների ներուժի միջոցով: Քոլեջի կայքէջը ներկայացված է երկու լեզուներով՝ հայերեն և անգլերեն: Անգլերեն տեղեկատվությունն առավել սակավ է: Քոլեջի սոցիալական հարթակների դիտարկումից պարզ դարձավ, որ դրանք լուսաբանում են նաև գործընկեր կազմակերպությունների կազմակերպված դասընթացները (GIZ, ՀՕՖ, Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն): Քոլեջի ֆեյսբուքյան էջը պարբերաբար լուսաբանում է քոլեջում կազմակերպված տարբեր միջոցառումներ: Քոլեջը հասարակության հետ հետադարձ կապի ապահովման համար կիրառում է սոցիալական հարթակները և պաշտոնական կայքէջը:

Հասարակության հետ հետադարձ կապի հաստատման միջոցների ուսումնասիրությունից և փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ Քոլեջը մշտական կապ է պահպանում գործատուների հետ: Կարիերայի կենտրոնի և պրակտիկայի ղեկավարի նախաձեռնությամբ հանդիպումներ են կազմակերպվել մարզի գործատուների, մանր և միջին բիզնեսով զբաղվող գործարարների հետ («Գետափի գինու գործարան» ՍՊԸ, «Արենիի գինու գործարան» ՓԲԸ, «Հին Արենի» ՍՊԸ, «Գինով» ՍՊԸ, «Արփա 79 Գոլդ» ՍՊԸ, «Արփա Պառնաս» ՍՊԸ, Եղեգնաձորի երկրագիտական թանգարան, Եղեգնաձորի պատկերասրահ, Եղեգնաձորի պահածոների գործարան և այլ): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մասնագիտական կողմնորոշման, միջին մասնագիտական կրթության տարածման, քոլեջի դերի և հեղինակության բարձրացման, ինչպես նաև քոլեջում ուսուցանվող մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման նպատակով իրականացվել են կարիերայի խորհրդատուի և ուսանողների այցելություններ մարզի դպրոցներ: Մարզի տարբեր դպրոցներից ավարտական դասարանների աշակերտներն այցելել են քոլեջ, ներկա եղել արհեստագործական մասնագիտությունների գործնական դասերին, ծանոթացել արհեստանոցներին, լաբորատորիաներին: Կարևորելով հանրային միջոցառումներին քոլեջի մասնակցությունը՝

նախնական արհեստագործական մասնագիտությունների ուսանողները ակտիվ մասնակցել են մարզային և համապետական ցուցահանդեսների, տոնավաճառների, միջոցառումների:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջի կողմից կազմակերպվում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված միջոցառումներ: Իրականացվում են տարբեր մասնագիտությունների գծով լրացուցիչ կրթական դասընթացներ և խորհրդատվական ծառայություններ քոլեջի ուսանողների և դասընթացներին մասնակցել ցանկացող այլ անձանց համար: ՎՁՏՊՔ-ը շարունակում է համագործակցել Microsoft Innovation Center Armenia կազմակերպության հետ, որի արդյունքում իրականացվում են համակարգչային ծրագրավորման JavaScript լեզվի ուսուցման դասընթացներ: Քոլեջում գործում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիան, որտեղ աշակերտները և ուսանողները ստանում են գիտելիքներ և կարողություններ ծրագրավորման, ռոբոտաշինության, 3D մոդելավորման տպագրության մասին: Քոլեջի համակարգչային կենտրոնում կազմակերպվում են սեմինարներ հասարակության տարբեր խմբերի համար, ուսանողները կազմակերպում են քննարկումներ, հանդիպումներ, բանավեճեր, միջոցառումներ, մրցույթներ, ցուցադրություններ: Ուսանողներից շատերն ընդգրկված են ՀԿ-ներում, «Կարմիր խաչ» կազմակերպությունում և կատարում են կամավորական աշխատանքներ՝ սկսած համայնքին վերաբերող աշխատանքներից մինչև մշակութային և քաղաքացիական ոլորտներին վերաբերող հարցերը: Հատկանշական է Եղեգնաձոր քաղաքում 2023թ. հիմված Restart Yeghegnadzor երիտասարդական հասարակական կազմակերպությունը, որում ընդգրկված են քոլեջի 20-25 ուսանողներ և շրջանավարտներ, որոնք մարզում իրականացնում են դասընթացներ, բանավեճեր, քննարկումներ, հանդիպումներ:

Ուսանողական խորհրդի շնորհիվ իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ՝ մշակութային, էկոլոգիական, մասնագիտական, կազմակերպվել են բանավեճեր, սպորտային, ասմունքի և ինտելեկտուալ մրցույթներ: 2022թ. լրացուցիչ կրթական ծրագրեր են իրականացվել «Դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում, որի ընթացքում վերապատրաստվել են դպրոցների հասարակական սննդի աշխատողները, Արցախից վերաբնակեցված կանանց համար իրականացվել են «Հրուշակագործություն» և «Ազգային խոհանոց» թեմաներով դասընթացներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում գործում են հաշվետվողականության սահմանված մեխանիզմներ, որոնք նպաստում են քոլեջի գործունեության հաշվետվողականության ապահովմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի ուշադրություն դարձնելու հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի արտացոլմանը խորքային վերլուծություններ իրականացնելու նպատակով, ինչը հնարավորություն կտա վեր հանել խնդիրները և իրականացնել հաջորդ տարվա պլանավորումը վերլուծական տվյալների հիման վրա:

Դրական հանգամանք է, որ քոլեջի ուսանողները ներգրավված են քոլեջի գործունեության լուսաբանման աշխատանքներում, ինչը նպաստել է ուսանողների

նախաձեռնողականության ավելացմանը: Այսուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, անգամ ֆինանսական ռեսուրսներ չտրամադրելու պարագայում, կայունության ապահովման համար անհրաժեշտ է բացի ուսանողներից պատասխանատվությունը ներառել քոլեջի աշխատակիցներից որևէ մեկի գործառութային շրջանակում: Սա թույլ կտա ապահովել տեղեկատվության շարունակական հասանելիությունը հանրության համար:

Քոլեջի հանրային միջոցառումները և բաց դռների օրերը նպաստում են հանրային հետաքրքրվածության բարձրացմանը: Ուսանողների ներգրավվածությունը քոլեջի կյանքում դրական ազդեցություն է ունենում նրանց մասնագիտական և սոցիալական հմտությունների վրա, այս նպատակով նրանց ներուժի օգտագործումը և նոր նախաձեռնությունների իրականացումը կնպաստի քոլեջի, հնարավորության դեպքում նաև Եղեգնաձոր քաղաքի մասին իրազեկվածության բարձրացմանը ու նոր կապերի ձևավորմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ լինելով մարզի միակ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը, քոլեջի դերը կարևոր է նաև հավելյալ կրթական ծրագրերի իրականացման տեսանկյունից: Դրանց արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է շարունակաբար գնահատել համայնքի ու մարզի կարիքները, ինչը թույլ կտա համահունչություն ապահովել հանրային պահանջների հետ, ինչպես նաև ֆինանսավորման լրացուցիչ աղբյուր դառնալ քոլեջի համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում ներդրված է ներքին ու արտաքին հաշվետվողականության համակարգ, առկա են գործընթացների թափանցիկության ու հրապարակայնության ապահովման մեխանիզմներ, ներդրված են հետադարձ կապի ապահովման գործիքներ, քոլեջի կողմից իրականացվում են հասարակությանն արժեքների փոխանցման միջոցառումներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՁՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Քոլեջի արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությունները սահմանված են 2021-2026թթ. զարգացման ռազմավարական ծրագրում: ՎՁՏՊՔ-ի նպատակներից է միջազգային համագործակցության ներուժի զարգացումը, Եվրոպական երկրների ՄԿՈ հաստատությունների համագործակցության լավագույն փորձի ուսումնասիրումը, ՎՁՏՊՔ-ի

հանրային կապերի հայեցակարգի վերանայումը: Քոլեջն իր նպատակներին հասնելու համար խնդիր է դրել ստեղծել համապատասխան ենթակառույց, ապահովել արտաքին կապերին, փորձի փոխանակմանը, ուսումնական հաստատության զարգացմանը նպաստող միջավայր, ընդլայնել արտաքին կապերի կանոնակարգված գործընթացները, բարելավել տեղական և միջազգային հաստատությունների ու կառույցների հետ քոլեջի արդյունավետ համագործակցությունը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ աշխատանքներ հաստատությունում իրականացնում են Արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքային խմբի կողմից, որի անդամները մասնակցում են ՄԿՈ ոլորտի զարգացմանը նվիրված քննարկումներին: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ նաև, որ միջազգային ծրագրերում քոլեջի ներգրավվածության, արտաքին համագործակցության հաստատումը հիմնականում իրականացվում է տնօրենի միջոցով: Քոլեջի կարիերայի կենտրոնը ներգրավված է գործատուների, Միասնական սոցիալական ծառայության և այլ կազմակերպությունների հետ համագործակցության մեջ շրջանավարտների զբաղվածությունն ապահովելու համար:

Փորձագիտական դիտարկումներից ու ուսանողների պրակտիկաների վայրեր այցելություններից պարզ դարձավ, որ քոլեջը նախաձեռնողականություն է դրսևորում մարզի փոքր ու մեծ գործատուների հետ համագործակցության հաստատման հարցում: Հաստատությունը համագործակցում է շուրջ 75 գործընկերների հետ: Հարկ է նշել, որ քոլեջն ունի գործատու գործընկերներ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, ինչը հնարավորություն է տալիս ապահովել ուսանողների պրակտիկան առավել փոքր խմբերով: Հաշվի առնելով նաև համայնքային ձեռնարկությունների փոքրամասշտաբ լինելը 1-3 հոգանոց խմբերով պրակտիկայի գնալը հնարավորություն է տալիս ուսանողներին առավել արագ ներգրավվել պրակտիկ աշխատանքներում և ստանալ մասնագիտական աշխատանքի առաջարկներ: Վերջին տարիներին գործատուների հետ համագործակցության միջոցով քոլեջի դասախոսական կազմը համալրել են նաև պրակտիկ փորձառությամբ 8 դասավանդողներ:

Քոլեջի ներկայացուցիչները փորձի փոխանակման նպատակով մասնակցում են միջազգային և տեղական գործընկերների կողմից կազմակերպված կոնֆերանսներին, օրինակ, 2023թ. քոլեջը մասնակցել է Բիզնես և կրթություն գործընկերություն հիմադրամի կողմից կազմակերպված «Մասնագիտական կրթություն և կողմնորոշում» ծրագրի շրջանակներում իրականացված կոնֆերանսին, Եվրոպական կրթական հիմադրամի կողմից կազմակերպված քննարկումներին: 2021թ.-ի սեպտեմբերից քոլեջը դարձել է Գերազանցությանն ուղղված կանաչ անցում թեմատիկ գործողությունների միջոցով GRETA Greening Responses to Excellence through Thematic Actions նախաձեռնության շրջանակում իրականացվող «Կանաչ անցում» ծրագրի մասնակից: 2023թ. քոլեջը մասնակցել է Եվրոպական կրթական հիմադրամի Գերազանցության ցանցի նախաձեռնությամբ իրականացված «Կարիերայի ուղեցույցը որպես գերազանցության գործիք, հայկական փորձը» թեմայով պանելային քննարկմանը՝ որպես խոսնակ: Քոլեջը համագործակցում է «Անուշավան և Օֆիկ Աբրահամյան» բարեգործական

կրթական հիմնադրամի հետ, որի շրջանակներում որոշ կաբինետներ համալրվել են նոր սարքերով ու համակարգիչներով: Հիմնադրամի աջակցությամբ քոլեջում հիմնադրվել են «Արմաթ» լաբորատորիան և գինու արտադրության փոքրածավալ արտադրամասը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տարբեր միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների կողմից իրականացվող ծրագրերում քոլեջը ևս ներգրավվում է, ինչպիսին են օրինակ Կարմիր խաչը, GIZ-ը, USAID-ը և այլն:

Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը քայլեր է ձեռնարկում Էրազմուս+ ծրագրերին մասնակցելու ուղղությամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը մասնակցում է Էրազմուս+ ծրագրերի ներկայացման վեբինարներին և համագործակցային հանդիպումներին («Կարողությունների զարգացում ՄԿՈՒ ոլորտում» թեմայով վեբինար և այլն):

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի իրականացման շրջանակում շարժունության դեպքեր առկա չեն: Միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացված քննարկումների արդյունքները քննարկվում են քոլեջում, սակայն այս համագործակցությունները դեռ չեն հանգեցրել կրթական ծրագրերի համեմատական վերլուծության:

Անդրադառնալով ներքին շահակիցների օտար լեզուների տիրապետմանը՝ կարելի է նշել, որ ըստ քոլեջի ներկայացրած տվյալների պատկերը հետևյալն է. օտար լեզուներին տիրապետող աշխատակազմի (դասավանդողներ, վարչական կազմ) տոկոսը վերջին 3 տարիների համար կազմում է՝ անգլերեն՝ 28,6%, ֆրանսերեն՝ 9,5%, գերմաներեն՝ 4,8%, ռուսերեն՝ 57,1%: Նշյալ ժամանակահատվածում ուսանողների համար պատկերը հետևյալն է՝ անգլերեն՝ 57,1%, ֆրանսերեն՝ 1,6%, գերմաներեն՝ 1,1 %, ռուսերեն՝ 40,2 %: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ լեզվահմացության մակարդակի գնահատում և հստակեցում, ինչպես նաև նվազագույն լեզվամակարդակ քոլեջը չի սահմանել: Քոլեջը կարևորում է օտար լեզվի իմացությունը և քայլեր է ձեռնարկում դասախոսական և վարչական անձնակազմի օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ կազմակերպելով լրացուցիչ դասընթացներ, խորհրդատվություններ, որոնց մասնակցել են մի շարք դասախոսներ և ուսանողներ: Քոլեջի ներկայացուցիչները նաև մասնակցել են Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից Վայոց ձորում Շարունակական կրթության ծրագրի շրջանակներում իրականացվող անգլերենի դասընթացներին: Փորձագիտական այցից պարզ դաձավ, որ այսուհանդերձ ներքին շահակիցների օտար լեզուների իմացությունը դեռևս չի բավարարում մասնագիտական հաղորդակցման կամ մասնագիտական գրականության անխոչընդոտ ուսումնասիրության համար: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջը չունի հստակ պլանավորում օտար լեզուների դասընթացների կազմակերպման ուղղությամբ, սակայն իր դասախոսների ներուժն օգտագործելով՝ ժամանակ առ ժամանակ կազմակերպում է կարճաժամկետ դասընթացներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը շարունակաբար քայլեր է իրականացնում արտաքին կապերի հաստատման ու զարգացման ուղղությամբ, ինչը նպաստել է քոլեջի ենթակառուցվածքների զարգացմանը, համագործակցային շրջանակի ձևավորմանը: Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի ներքին շահակիցների նախաձեռնողականության ավելացումը գործընկերային հարաբերությունների ձևավորման գործում, ինչը հնարավորություն կտա շարունակաբար ավելացնել համագործակցությունը համանման ուսումնական հաստատությունների, գործատուների հետ և կնպաստի փորձի փոխանակմանը:

Քոլեջի զարգացման հնարավորությունները դիտարկելով գործատուների հետ շարունակական փոխգործացության ընդլայնման համատեքստում՝ դրական հանգամանք է, որ քոլեջը պրոակտիվ է գործատուների հետ կապեր հաստատելու հարցում, տիրապետում է մարզում գործող կազմկերպությունների մասին ամբողջական տեղեկատվությանը: Այս հանգամանքը մեծապես նպաստում է ուսանողների պրակտիկաների արդյունավետ կազմակերպմանը և հնարավորություն ընձեռում մասնագիտական աշխատանքի առաջարկներ ստանալու համար: Դրական է նաև, որ այս համագործացությունների արդյունքում վերջին տարիներին քոլեջի դասախոսական կազմը համալրվում է պրակտիկ փորձառությամբ մասնագետներով, ինչը նպաստում է գործնական պարապմունքների իրականացմանը, անհրաժեշտության դեպքում նաև ռեսուրսների համատեղ օգտագործմանը գործնական պարապմունքների, վարպետաց դասերի իրականացման նպատակով:

Դիտարկելով քոլեջի փորձառությունը տեղական կապերի հաստատման գործում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը ներուժ ունի նաև զարգացնելու միջազգային կապերը փորձի փոխանկման, կրթական ծրագրերի ուսումնասիրության, շարժունության ապահովման համար: Դրական է, որ քոլեջը ներգրավվում է միջազգային գործընկերների կողմից կազմակերպված քննարկումներում: Այսուհանդերձ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի այս ուղղությամբ հստակորեն պլանավորելու իր գործընթացները, ընտրելու ուղղությունները, ինչը կնպաստի կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացմանը և շարժունության ծրագրերին մասնակցության շնորհիվ միջազգային համատեքստին ծանոթ շրջանավարտների թողարկմանը:

Միջազգայնացման ծրագրերին մասնակցության համար քոլեջն անհրաժեշտություն ունի զարգացնելու անձնակազմի և ուսանողների լեզվական կարողությունները, ինչը խիստ կարևոր է մասնագիտական հաղորդակցման և միջազգային փորձին ծանոթանալու համար: Լեզվական պատրաստվածությունը պետք է դառնա կրթական քաղաքականության հիմնական մասը՝ նպաստելու լավագույն փորձի վերհանմանն ու տեղայնացմանը քոլեջում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի գործատուների հետ համագործակցության լայն շրջանակ, որը ներառում է տարածաշրջանի մեծ ու փոքր գործատու կազմակերպություններին, քայլեր է ձեռնարկում միջազգային ծրագրերում ներգրավվելու ուղղությամբ, համագործակցությունը նպաստել է ռեսուրսների համատեղ կիրառմանը,

գործատու դասավանդողների ներգրավմանը, նախորդ հավատարմագրումից հետո քայլեր է ձեռնարկել շահակիցների՝ օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՁՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2011թ.-ից: Որակի մշակույթի ձևավորման և գործընթացների կանոնակարգման նպատակով քոլեջը փորձել է ձևավորել համապատասխան փաստաթղթային բազա: 2014թ.-ին ներդրվել է Որակի ապահովման քաղաքականություն և ռազմավարություն փաստաթուղթը, որտեղ նշվում են որակի ապահովման քաղաքականության խնդիրները, սկզբունքները, որոշակիացվում է որակի ապահովման համակարգի կազմակերպական կառուցվածքը: 2018 թ.-ին հաստատվել է ՎՁՏՊՔ-ի որակի ապահովման ձեռնարկը, որտեղ կրկին ներկայացվում է որակի ապահովման քաղաքականությունը, որակի ապահովման համակարգը, անդրադարձ է կատարվում քոլեջի բոլոր գործընթացներին ըստ ռազմավարական ծրագրի: 2023թ.-ին լրամշակվել է ՎՁՏՊՔ որակի ապահովման ենթակառուցվածքի կանոնակարգը: Վերջինս քոլեջի կառուցվածքային ստորաբաժանում է, որի առաքելությունը քոլեջի որակի ներքին ապահովման մեխանիզմների գործադրումը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումն է: Այստեղ առանձնացվել և հստակեցվել են եթակառուցվածքի խնդիրներն ու գործառույթները:

Քոլեջում 2021թ.-ին ներդրվել է 2021-2026թթ.-ի Որակի ապահովման ենթակառուցվածքի զարգացման ռազմավարական ծրագիր և դրա իրականացման պլան-ժամանակացույց, որում ներկայացված նպատակները, խնդիրները և պլանը նույնն է, ինչ նույն ժամանակում հաստատված ՎՁՏՊՔ-ի ռազմավարական ծրագրի նպատակներն ու խնդիրները՝ ըստ որակի ապահովման 10 չափանիշների: Նախատեսված են վերջինիս գործողությունների իրականացման ժամանակացույցը և պատասխանատուների կազմը: Հարկ է նշել, որ ՌԾ-ում առաջընթացի գնահատման ցուցիչներ և ֆինանսական ռեսուրսներ չեն ներառվել, որոշ դեպքերում էլ նախատեսված են գործողություններ, օրինակ՝ «Բարելավել

արտաքին կապերին ու միջազգայնացմանը նպաստող ընթացակարգերը և մեխանիզմները», «Մեխանիզմներ մշակել մարզի զարգացմանն ուղղված միջազգային ծրագրերում ընդգրկվելու նպատակով», սակայն իրականացման գործիքակազմ և ակնկալվող արդյունքներ նախատեսված չեն:

ՎՁՏՊՔ-ում, որպես ՈԱ գործընթացները կառավարող և իրականացնող մարմին հանդիսանում է Որակի ներքին ապահովման հանձնաժողովը, որում ընդգրկված են վարչական, դասախոսական, ուսանողական ներկայացուցիչներ, ինչպես նաև գործատուներ: Հանձնաժողովն առաջնորդվում է իր աշխատակարգով և ՈԱ ընթացակարգով: Որակի ներքին ապահովման հանձնաժողովն (ՈՆԱՀ) ունի վերահսկման և վերանայման, մշտադիտարկման և վերլուծության, ինչպես նաև տեխնիկական, տեղեկատվական աշխատանքային խմբեր, որոնք իրականացնում են իրենց աշխատակարգում ամրագրված համապատասխան գործառույթները: Որակի ներքին ապահովման հանձնաժողովի նախագահը քոլեջի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենն է: ՎՁՏՊՔ-ում Որակի ապահովման համակարգի նոր մոդելի կիրառման արդյունքում աշխատանքների մեծ մասն իրականացվում է հանձնաժողովի կողմից, որտեղ ընդգրկված են քոլեջի բոլոր ենթակառույցների, խորհրդատվական մարմինների որակի պատասխանատուները: Որակի ապահովման պատասխանատուի համար քոլեջը հատկացրել է մեկ դրույք հաստիք: Պատասխանատուն նաև դասավանդում է քոլեջում: Առանձին աշխատասենյակ պատասխանատուի աշխատանքներն իրականացնելու համար նախատեսված չէ, փաստաթղթերը պահպանում են Ուսումնական մասում: Որակի ապահովման պատասխանատուն ևս առաջնորդվում է 2021-2026թթ.-ի Որակի ապահովման ենթակառուցվածքի զարգացման ռազմավարական ծրագրով և դրա իրականացման պլան-ժամանակացույցով:

Նախորդ հավատարմագրման ժամանակ փորձագիտական խումբը տրամադրել է խորհրդատվություն. «Ապահովել մարդկային ռեսուրսների կոմպետենցիաների կատարելագործումը՝ ուղղված որակի ապահովման գործընթացների իրականացմանը»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ֆինանսական ռեսուրսների բաշխումը կարգավորող հիմնական փաստաթղթում՝ վերջին երկու տարիների եկամուտների և ծախսերի նախահաշվում, Որակի ներքին ապահովման գործընթացներին նպատակային ֆինանսական հատկացումներ նախատեսված չեն: ՌԾ-ով ևս որակի ապահովման գործընթացների իրականացման համար ֆինանսական ռեսուրսներ նախատեսված չեն: Քոլեջի որակի ապահովման պատասխանատուն չի մասնակցել որակի ապահովման կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումների:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ շահակիցներն ընդգրկված են ՈՆԱՀ-ի աշխատանքային խմբերում, ներքին և արտաքին շահակիցները մասնակցում են ՈՆԱՀ-ի կողմից կազմակերպվող հարցումներին, բաց քննարկումներին, սակայն նկատելի չէ դրանց ազդեցությունը որոշումներ կայացնելու համար:

Նախորդ հավատարմագրման արդյունքում փորձագիտական խումբը ՎՁՏՊՔ-ին տրամադրել է խորհրդատվություն՝ Մշակել և ներդնել շահակիցների շարունակական ակտիվ

ներգավմանն ուղղված հստակ մեխանիզմեր, ինչը տեղ է գտել նաև քոլեջի կողմից հաստատված Թերությունների վերացման ծրագրում: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ ՈԱ գործընթացներում շահակիցների ներգրավվածության հիմնական մեխանիզմ առայժմ հարցումների իրականացումն է: ՈՆԱՀ-ի կողմից կազմակերպվում են հարցումներ ուսանողների, աշխատակիցների, շրջանավարտների և գործատուների շրջանում, գնահատվում են մասնագիտական կրթական ծրագրերը, քոլեջում ստացած տեսական գիտելիքների, հմտությունների, գնահատման, զբաղվածության, ռեսուրսներից բավարարվածության աստիճանը՝ լսարանները, գրադարանը, ջեռուցումը, անվտանգության պայմանները: ՈՆԱՀ կողմից հարացումների արդյունքները վերլուծվում են, քննարկվում են ամբիոններում: Անհրաժեշտ է նշել, որ վերջիններս խորքային վերլուծություններ չեն, դրանք առավել շատ վիճակագրական պատկեր են ձևավորում:

Հարցաշարերի դիտարկումը և փորձագիտական վերլուծությունները ցույց տվեցին, որ երբեմն հարցաշարերում տեղ գտած հարցերը կազմված չեն հստակ մեթոդաբանությամբ, տեսանելի չէ, թե քոլեջն ինչ է ակնկալում պարզել նման հարցադրմամբ, օրինակ՝ Ինչու՞ մոդուլային ծրագրում ներառված տեսական և գործնական պարապունքների բաշխվածությունը չի բավարարում մոդուլի արդյունավետ յուրացմանը, որպես տարբերակ նշված է «Տեսականի և գործնականի դասախոսները չեն համագործակցում»: Հարկ է նշել, որ մոդուլով նախատեսած տեսական և գործնական պարապմունքները քոլեջում դասավանդում է նույն դասախոսը, բացառությամբ «Գինեգործություն և հյութերի արտադրություն» մասնագիտության[11]:

Հարցաթերթերի վերլուծությունում առկա են որոշ տվյալներ, որոնք ազդում են հարցումների արդյունքների օբյեկտիվության և արժանահավատության վրա, քանի որ հստակ չէ դրանց իրականացման մեթոդաբանությունը: Այսպես օրինակ՝ ուսանողներին ուղղված «Տեղեկացվա՞ծ եք էլեկտրոնային հարթակներից» հարցին 134 ուսանող նշել է, որ տեղյակ է, այնուհետև նշված է, որ 137 ուսանող կարողանում է օգտվել էլեկտրոնային հարթակներից՝ չնայած նախորդ հարցին պատասխանել էին ավելի քիչ թվով ուսանողներ:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ շահակիցները մոտիվացված չեն հարցումներում ներգրավվելու համար: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ չի երևում հարցումների կազմակերպման պարբերականությունն ու դրանց արդյունքներով բարեփոխումները: Չեն կիրառվել տվյալների հավաքագրման և մշակման արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմեր:

Գործատուները ևս մասնակցում են հարցումներին, սակայն ինչ վերաբերում է կրթական ծրագրերին, դրանց վերջնարդյունքների ձևակերպմանը և տրված որակավորումների որակի գնահատմանը, ապա նրանց մասնակցությունը ապահովվում է այնքանով, որ որոշ գործատուներ ընդգրկվում են ամփոփիչ ատեստավորման հանձնախմբերում, ինչպես նաև պրակտիկանների ժամանակ օրագրերում կարծիքների գրառմամբ: Առանձին դեպքերում որոշ գործատուներ առաջարկություններ են ներկայացնում

[11] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

տնօրենին: Այդուհանդերձ, ՈՆԱՀ-ի կողմից հավաքագրվում են տարաբնույթ տվյալներ (հարցումներ, հանդիպում-քննարկումներ), սակայն դրանք համակողմանիորեն չեն վերլուծվում և չեն դառնում հիմք կառավարչական որոշումների կայացման համար:

Որակի ապահովման համակարգը քոլեջում նոր չէ ձևավորվում: Այդուհանդերձ, ՊԻԳԲ շրջափուլը քոլեջում ամբողջությամբ ներդրված չէ, նախատեսված գործընթացները հիմնականում գտնվում են պլանավորման և իրականացման շրջափուլերում:

Նախորդ հավատարմագրման արդյունքում քոլեջը խորհրդատվություն է ստացել իրականացնելու որակի ապահովման լավ փորձի ուսումնասիրություն՝ համակարգի բարելավման նպատակով: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջն առայժմ չի իրականացվել որակի ապահովման համակարգի համակողմանի վերլուծություն՝ լավագույն փորձի ներդրման ուղղությամբ:

ՈԱ համակարգի շարունակական բարելավումը քոլեջը համարում է իր կարևորագույն խնդիրներից, սակայն վերանայումը քոլեջն նախևառաջ կապում է մի շարք փաստաթղթերի մշակման և վերամշակման աշխատանքների հետ: 2022-2023 թթ. ՈՆԱՀ -ի կողմից մշակվել են 21, լրամշակվել՝ 29 իրավական փաստաթղթեր, որոնք սահմանում են ուսումնական գործընթացի կազմակերպման, իրականացման և գնահատման աշխատանքները կանոնակարգող դրույթները: Նույն ժամանակահատվածում մշակվել են ավելի քան 28 հարցաթերթեր՝ շուրջ 260 հարցերով, արդյունքների և դրանց վերլուծությունների գնահատման 25 ձևանմուշներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ փաստաթղթերը լրամշակվում են՝ հիմքում չունենալով վերլուծված տվյալներ[12]:

Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությունը՝ որակի արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար, կարելի է նշել, որ փաստաթղթում հիմնականում չեն ներկայացվել անհրաժեշտ հիմքերը, վերլուծությունների արդյունքները: Ինքնավերլուծությունը հիմնականում նկարագրողական է և ամբողջությամբ չի արտացոլում չափորոշիչների պահանջների վերլուծությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի որակի ապահովման պատասխանատուի կողմից կազմակերպվել և համակարգվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը: Կազմված ինքնավերլուծությունը տարածվել է շահակիցների շրջանում, քոլեջի կողմից կազմակերպվել են ինքնավերլուծության քննարկմանը նվիրված հանդիպումներ[13]: Այսուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գործատուների և ներքին շահակիցների կարծիքները ամբողջությամբ արտացոլված չեն ինքնավերլուծությունում, ինչպես նաև չի երևում նրանց մասնակցությունը ԻՎ աշխատանքներում:

Ներքին և արտաքին շահակիցների համար որակի ապահովման գործընթացների թափանցիկության ապահովման հիմնական գործիքը քոլեջի կայքէջն է: Կայքի «Որակի ապահովում» բաժնում ներկայացված են ՈՆԱՀ-ի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերը (կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր և այլն):

---

[12] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:
[13] Միտքը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ որակի ապահովման գործընթացները քոլեջի համար դիտարկվում են որպես ռազմավարական առաջնահերթություն: Սակայն, չնայած մի շարք փաստաթղթերի մշակմանը և ներդրմանը, դրանցով նախատեսված գործընթացները լիարժեք չեն իրականացվում: Այս բացը կարող է հանգեցնել գործընթացների արդյունավետության նվազմանը, ինչի հետևանքով որակի ապահովման համակարգը չի կարող լիարժեք կայանալ, իսկ որակի մշակույթի ամրապնդումը չի տանի ներքին որակի ապահովման համակարգի զարգացմանը: Ուստի փորձագիտական խումբը գտնում է՝ անհրաժեշտ է, որ ընթացակարգերը ստանան հստակ պլանավորումներ և ամբողջական կիրառություն՝ քոլեջի ռազմավարական նպատակներին հասնելու համար: Որակի ապահովման աշխատանքների արդյունավետ պլանավորումը կնպաստի քոլեջի կարիքների վերհանմանը և տվյալներ կապահովի որոշումների կայացման համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ստեղծել է հանձնաժողովներ՝ ներգրավելով դասախոսներ, ուսանողներ և վարչական աշխատողներ, ինչը միտված է մարդկային ռեսուրսների պակասի պարագայում ուսումնական և որակի ապահովման գործընթացների լիարժեք իրականացմանը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի փոխտնօրենների մակարդակում հանձնաժողովի ղեկավարումը կարող է շահերի բախման ռիսկեր պարունակել և վտանգել կառավարման համակարգի գործունեության արդյունավետության գնահատումը և խնդիրների վերհանումը: Փորձագիտական խումբը շեշտադրում է տվյալների հավաքագրման և վերլուծության հստակ մեխանիզմների, ինչպես նաև արդյունավետության գնահատման ցուցիչների ներդրման անհրաժեշտությունը, ինչը կհանգեցնի որակի ներքին ապահովման համակարգի կայացմանը: ՈՆԱ պատասխանատուների մասնագիտական շարունակական զարգացման ապահովումը կնպաստի նրանց կարողությունների բարելավմանը և կհանգեցնի որակի ապահովման համակարգի արդյունավետ կառավարմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջի ղեկավար կազմն աջակցում է որակի ապահովման համակարգի ձևավորմանը՝ տրամադրելով մարդկային ռեսուրսներ: Սակայն, անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել ՈՆԱՀ աշխատակիցների պարբերական վերապատրաստմանը և մասնագիտական զարգացմանը, քանի որ այս հմտությունների պակասը կարող է խոչընդոտել որակի ապահովման գործընթացների արդյունավետ իրականացմանը: Ապագայում դա կարող է հանգեցնել համակարգի թուլացման և որակի մշակույթի զարգացման դանդաղեցմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը որակի ապահովման ներքին համակարգի համեմատական վերլուծության իրականացումը, այլ քոլեջների որակի ապահովման կառույցների հետ համագործակցությունը կարող է նպաստել կարիքների վերհանման մեխանիզմների բարելավմանը:

Չնայած ՈՆԱՀ-ի կողմից իրականացվող հարցումներին, դրանք միշտ չէ, որ ապահովում են անհրաժեշտ տվյալներ՝ որոշումներ կայացնելու համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի կատարելու հարցաշարերի վերանայում՝ սահմանելով,

թե ինչպիսի տվյալների կարիք ունի հաստատությունը, և փորձարկելու դրանք՝ նախքան ամբողջական կիրառումը: Արդյունքում, քոլեջը կկարողանա ավելի արդյունավետ որոշումներ կայացնել և բարելավել իր գործընթացների որակը: Այս համատեքստում հարցաշարերի նպատակային իրականացումը, դրանց հարցերի քանակի նվազեցումը և թիրախային խմբերի ճիշտ ընտրությունը կնպաստի ինչպես կարիքների ամբողջական վերհանմանը, այնպես էլ որակի ապահովման համակարգի ռեսուրսների օպտիմալ օգտագործմանը: Հաշվի առնելով, որ որակի ապահովումը պահանջում է նպատակային ու տարբերակված մոտեցում՝ քոլեջն անհրաժեշտություն ունի դիտարկելու նաև որակի ապահովման նոր գործիքների ներդրման կարիքը: Քանակական հարցումներից բացի կարիքների վերհանմանն ուղղված քննարկումների, խորը հարցազրույցների, ֆոկուս խմբային քննարկումների իրականացումը և քոլեջի կարիքներից բխող այլ գործիքակազմի կիրառումը թույլ կտան ըստ սահմանված նպատակների ստանալ առավել խորքային որակական պատկեր հետագա բարելավումների իրականացման նպատակով:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի որակի ապահովման համակարգը պետք է ոչ միայն կենտրոնանա ֆորմալ գործընթացների վրա, այլև վերլուծի, թե ինչպես են այդ գործընթացները օժանդակում կրթության և ծառայությունների իրականացմանը՝ անդրադառնալով քոլեջի գործունեության բոլոր ուղղություններին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի կայքում հասանելի են ՈՆԱՀ-ի վերլուծությունները, իսկ դրանց մասին շահակիցների ավելի լայն շրջանակին իրազեկելը կնպաստի նրանց շրջանում որակի պահովման համակարգի նպատմամբ վստահության բարձրացմանը և այս գործընթացներում նրանց առավել ակտիվ ներգրավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջի որակի ներքին ապահովման համակարգի զարգացմանն ուղղված աշխատանքները դեռևս չեն հանգեցնում քոլեջի գործունեության բոլոր ոլորտներն ընդգրկող ուղղությունների վերաբերյալ կարիքների վերհանմանը, որակավորումների արժանահավատության ու արդյունահենք կառավարման վերաբերյալ տվյալների հավաքագրմանը, առկա քաղաքականությունն ու ընթացակերգերը չեն հանգեցրել արդյունահենք տվյալների դուրսբերմանը, որոնք կարող էին հիմք հանդիսանալ կառավարչական որոշումների կայացման համար, որակի ներքին ապահովման համակարգի փոփոխությունների արդյունքում արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ չեն սահմանվել, որակի ներքին ապահովման համակարգը դեռևս չի ապահովում բավարար հիմքեր որակի արտաքին գնահատման գործընթացների համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի չի բավարարում չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎՀՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Բավարարում է**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**



Արմեն Հարությունյան
Փորձագիտական խմբի ղեկավար

18-ը հոկտեմբերի, 2024 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմեն Հարությունյան՝ 2000 թվականին ավարտել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Թատերագիտության բաժինը: 2003 թվականին ստացել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2011 թթ. աշխատել է ԵԹԿՊԻ-ի Թատրոնի և կինոյի ֆակուլտետի դեկանի տեղակալ, 2011-2013թթ. որպես ուսումնական մասի վարիչ: 2002թ.-ից, դասախոս՝ Արվեստի սոցիոլոգիա, Թատրոնի պատմություն, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում: 2014-2023թթ. եղել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի դեկան: 2023թ.-ից նույն ինստիտուտի Զարգացման գծով պրոռեկտորն է: Մի շարք հոդվածների հեղինակ ու համահեղինակ է:

Յասաման Ավագյան՝ 2001թ.-ին ավարտել է ԱրՊՀ-ի Քիմիա-կենսաբանության ֆակուլտետը, 2003թ.-ին՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան: 2006թ.-ին ավարտել է ասպիրանտուրան: 2003-2004թթ. աշխատել է Ստեփանակերտի թիվ 3 և 7 միջնակարգ դպրոցներում՝ որպես կենսաբանության ուսուցչուհի: 2010թ. աշխատել է Արցախի գիտական կենտրոնում՝ որպես լաբորանտ: 2013թ. աշխատել է Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանում՝ քիմիայի ամբիոնի դասախոս: Այնուհետև 2017թ. եղել է նույն համալսարանի Քիմիա-կենսաբաության ամբիոնի վարիչ: 2018թ. եղել է համալսարանի ռազմավարական գծով պրոռեկտոր, 2019 թ.՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: 2023թ.-ից Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետն է:
2018թ. աշխատանքի բարձր արդյունավետության համար ստացել է «Գրիգոր Նարեկացի» համալսարանի պատվոգիր, 2021թ.՝ «Նարեկացի» կրթագիտական մեդալ:

Սուդարիկ Պետրոսյան՝ 1986թ. ավարտել է Մոսկվայի պետական Սննդարդյունաբերության ինստիտուտը՝ ստանալով սննդի պատրաստման տեխնոլոգի որակավորում: 2006թ.-ից աշխատել է Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջում: Ներկայումս Արհեստագործական ամբիոնի վարիչն է, արտադրական ուսուցման վարպետ: Մանսկացել է մասնագիտական մի շարք վերապատրաստումների ու սեմինարների: 2015 թ.

մասնակցել է նաև Նախնական մասնագիտական կրթության որակավորման պետական կրթական չափորոշիչների մշակմանը։

Անգելինա Տոնոյան՝ սովորում է Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում» բաժնում։ 2023թ. մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին։

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	16.06.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Մեկնում Երևանից Եղեգնաձոր	11:00	13:00	120 րոպե
2.	Հանդիպում տնօրենի հետ	14:00	14:50	50 րոպե
3.	Հանդիպում փոխտնօրենների հետ	15:00	15:50	50 րոպե
4.	Ռեսուրսների դիտարկում	16:00	17:30	90 րոպե

N.	17.06.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	11:30	12:20	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ	13:40	14:40	60 րոպե
6.	Հանդիպում շրջանավարտների հետ	14:50	15:40	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	15:50	16:50	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:00	18:30	90 րոպե

N.	18.06.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ	10:30	11:10	40 րոպե
3.	Ուսանողների պրակտիկաների և ավարտական քննության դիտարկում	11:20	13:00	100 րոպե

4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:10	14:10	60 րոպե
5.	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Զբոսաշրջություն» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Խոհարարական գործ» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	14:20	15:10	50 րոպե

6.	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ	Զուգահեռ հանդիպում «Զբոսաշրջություն» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ	Զուգահեռ հանդիպում «Խոհարարական գործ» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ	15:20	16:20	60 րոպե
7.	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Զբոսաշրջություն» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Խոհարարական գործ» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	16:30	17:20	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			17:30	19:00	90 րոպե

N.	19.06.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (կարիերայի կենտրոնի պատասխանատու, ուսումնական մասի վարիչ, մեթոդիստ, պրակտիկայի ղեկավար) ղեկավարների հետ	09:00	09:50	50 րոպե
2.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (կադրերի բաժնի տեսուչ, գրադարանավար, հաշվապահ, տնտեսվար) ղեկավարների հետ	10:00	10:50	50 րոպե
3.	Հանդիպում որակի ապահովման բաժնի ներկայացուցիչների հետ	11:00	12:00	60 րոպե
4.	Բաց հանդիպում	12:10	12:50	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
6.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:10	15:10	60 րոպե
7.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:20	16:20	60 րոպե
8.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	16:30	17:00	30 րոպե
9.	Վերադարձ Եղեգնաձորից Երևան	17:30	19:30	120 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Նախորդ ՌԾ-ի իրականացման վերլուծություն	1
2.	ՎՁՏՊՔ-ի Հաշվետվությունների գնահատման կարգ	2
3.	Կառավարման խորհրդի 16.12.2022թ. Արձանագրություն N 07	2
4.	Ստորաբաժանումների տարեկան պլաններ և հաշվետվություններ	2
5.	Պաշտոնների նկարագրեր	2
6.	Տնօրինական խորհրդի կազմ	2
7.	Թեմատիկ օրացուցային պլաններ Դասի պլաններ	3
8.	Ուսումնամեթոդական խորհրդի արձանագրություններ	3
9.	Գնահատման թերթիկներ	3
10.	Գնահատման բովանդակային բնութագրիչներ	3
11.	Ավարտական քննությունների տոմսեր	3
12.	Ամփոփիչ ատեստավորման նախագահների հաշվետվությունները վերջին երեք տարիների համար՝ ըստ ներկայացված 3 ՄԿԾ-ների	3
13.	Մասնագիտական կողմնորոշման թեստեր	3
14.	Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմ (Ընտրված կրթական ծրագրեր)	3
15.	Ըստ կրթական ծրագրերի՝ 2022թ. և 2023թ. ընդունելության, նախատեսված անվճար և վճարովի տեղերի, դիմորդների, ընդունվածների տվյալներ	4
16.	Ուսանողական խորհրդի կազմ	4
17.	Շրջանավարտների բազա	4
18.	Ուսանող/ ՈՒՀ կազմ հարաբերակցություն	4
19.	Վարչական աշխատակիցների ցանկ	4
20.	Պրակտիկայի հաշվետվություններ, որտեղ առկա է հետազոտության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմ	4
21.	ՊԴ կազմի մրցույթի հիմքեր և արձանագրություններ	5
22.	Մատյաններ /ընտրված ծրագրերի համար՝ յուրաքանչյուր կուրսից մեկական/	5
23.	Ներքոլեջային վերապատրաստումների ցանկ, հիմքեր	5

24.	Դասալսումների մատյաններ /ամբիոններից՝ մեկական/	5
25.	Դասախոսների պորտֆոլիոներ /յուրաքանչյուր ամբիոնից՝ հնգական/	5
26.	Պրակտիկաների լրացրած օրագրեր/ ընտրված 3 կրթական ծրագրերի համար՝ 4-ական/	5
27.	Ուսումական խորհրդատուների կազմը, խորհրդատվության թեմաները և հանդիպումների ժամանակացույցը, գրանցումների մատյանը	5
28.	Ամբիոնների հաստիքացուցակը՝ աշխատավարձերով Դասախոսական կազմի միջին տարիքը	5
29.	Ուսումական ծանրաբեռնվածության նորմատիվները	5
30.	Դասախոսների վերապատրաստումների ժամանակացույց	5
31.	Վերապատրաստման փաթեթներ	5
32.	Դասալսումների հիմքեր և վերլուծություններ	5
33.	Դասախոսական կազմի ռեզերվ	5
34.	Երիտասարդ կադրերի պատրաստման պլան	5
35.	Ֆինանսական հատկացման հիմքեր դասախոսական կազմի վերապատրաստումների համար	5
36.	Սկսնակ դասախոսների կողմից կատարված հետազոտական աշխատանքներ	5
37.	Հետազոտական աշխատանքների թեմաներ	6
38.	Ըստ կրթական ծրագրերի բյուջեի բաշխում	7
39.	Ֆինանսների տնօրինման քաղաքականություն	7
40.	ՎՁՏՊՔ բյուջե, նախահաշիվ և կատարողական վերջին երեք տարիների համար	7
41.	Ստորաբաժանումների ներկայացրած պահանջագրեր	7
42.	Քաղաքային մարզադպրոցի ռեսուրսների օգտագործման վերաբերյալ պայմանագիր	7
43.	Կայքի դիտելիության տվյալներ	8
44.	Պրակտիկայի պայմանագրեր	9
45.	Օտար լեզուների դասընթացների իրականացման հիմքեր	9
46.	Տեղացի և միջազգային գործընկերների հետ համագործակցության գործող պայմանագրեր	9
47.	Քոլեջի ընթացիկ ինքնավերլուծություններ	10
48.	Կարիքների վերհանման հարցաթերթեր և լրացված օրինակներ	10
49.	2022-2024թթ. հարցումների վերլուծություն	10

50.	Որակի ապահովման պլաններ և հաշվետվություններ վերջին երեք տարիների համար	10
51.	ՈՆԱՀ-ի ընդլայնված նիստերի արձանագրությունները, բաց քննարկումների ժամանակ ներկայացրած առաջարկները ԱՀՈՒ ծրագրի ներդրման և գերազանցության կենտրոն դառնալու վերաբերյալ	10
52.	Վերահսկման և վերանայման, մշտադիտարկման և վերլուծության, տեխնիկական, տեղեկատվական աշխատանքային խմբերի գործառույթները Աշխատանքային խմբերի կազմը	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. ստորաբաժանումներ,
3. համակարգչային լսարաններ,
4. «Արմաթ» ինժեներական լաբորատորիա,
5. խոհարարական լաբորատորիա,
6. փայտամշակման կենտրոն,
7. գինեգործության լաբորատորիա,
8. անատոմիայի և առաջին օգնության կաբինետ,
9. կարի արտադրամաս-լսարան,
10. մեքենաշինության և տրանսպորտի շահագործման լսարան,
11. գրադարան:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՀՈՒ- աշխատանքի վրա հիմված ուսուցում
ԿԳՄՍ նախարարություն- Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր
ՄԿՈՒ- Մասնագիտական կրթություն եւ ուսուցում
ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ- որակի ապահովում
ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ
ՌԾ- ռազմավարական ծրագիր
ՎՁՏՊՔ- Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ
ՈՒԽ- ուսանողական խորհուրդ
ՈՒՕ կազմ-ուսումնաօժանդակ կազմ